

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 20

15 ՄԱՅԻՍ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Իրողին պարտաւորութիւնները(?) . ՄԵՐՈՒՏԵՍ — Մոռցուած էջեր . «Ո՛վ իմ գեղեցիկ» . ՎԻՔԴՕՐ ՀԻԻՊՕ . քարզմ . 80 ԳԹ . Ն . ՌՈՒՍԻՆԵԱՆ . — Օրուան կեանքէն . ՄԵՆԱՍԷՐ . — Իրական բարեօրոյն եւ նոր զրոյր . Ե . ՄԵՆԱՍԵԱՆ . — Ուրուագիծներ — Վայելենական . «Ն . Շաւարե» . ԳԱՄԷՐ . — Քաղաքագուրկը (Նորավայ) ՄԻՀՐԱՆ ԴԱԻԹԵԱՆ . — Անկտրեյի (Բանաստեղծութիւն) ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ . — Խմբագրական Նօթեր :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերի սարեկան բաժանորդագիւնն է Կ. Պոլսոյ համար Բաւսուն դրօ . եւ գաւառներուն համար յիսուն դրօ . կանխիկ վճարելի : Արտասահման 12 Յրանք կամ 5 րուպի : Թղթասարական ծախքը խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւններ կը սկսին ամէն ամսոյ մէկին : ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու : Այն բաժանորդներ որոնք պակաս քեր ստացած են , պէտք է իսկոյն իմացնեն խմբագրութեան : Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր :

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր :

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ , դիւրամասշտիկ պայմաններով :

Ձեռն-ԲԵ ԿՐԾԱԽՈՒԻ ՀԱՏՐ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درغليه ده غاطه ده (ماسيس) غزتي سى اداره سى

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլս , Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կա. որավարութեան ֆոնդայիքի ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ գո՛ծ զած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուե՛նք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կաթմը պաշտօնատուներէն զատ, Բարի-գի՝ Օբէրա, Վօտվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆօլի-Տրամաթիք եւ այլն թատրոնները, նաեւ Պօստոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատուները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտինիէ ու Օթէլ աը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք, Հալը-Մարսիլիա նաւարկութեան, Ծովային Փոխադրութեանց, Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Ընկերութեան դրամատունն է Քրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարա կլն վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԴԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել հրդեհի վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար, Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ — Պօլիս. Մահմուտ փաշա, Պէոյիք Եըլաղ խան, Թիւ 14, Լա Գօնֆիանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ իր առնական սեփականութիւնը եղող անքիփաի վաճառատուն մը, Շուկայ Սահաֆլար, Թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յաճնաւորութիւններ կ'ընդունուին:

ՄԵԾ ԼԻՔԻՏԱՍԻՕՆ

ՀԱՍՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐՈՒ

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՀԱՇՈՒԹՅԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

Ապրիլ 19/6 երկուշաբթի օրէն սկսած է հաշուեյարդարութիւնը եւ վաճառումն ալ ժամ լուծեալ է ֆիթիմօրուլօ եւ Հնկերութեան տան ապրանքներուն: Ընկերութեան վաճառատունը կը գտնուի Սթամպօ, Սուլթան Համամ, Բագթիվան Խան: Ապրանքներէն մաս մը կը գտնուի նաեւ Փընտըզճի փողոցը գտնուող մթերանոցը, վաճառքներն են մետաքեղէն, թուխ, բլիւշ, բրդեղէն, բամպակեղէն, որք կանխիկ դնուած են անգլիական եւ ֆրանսական գործարաններէ՝ արդի գիներուն բարձրացումէն առաջ եւ արնպիտի գիներով, զորս անկարելի է այսօր ձեռք բերել եւ պիտի ծախուին ալ ժամ պարակի վրայ անմրցելի պայմաններով: Հասարակութիւնն եւ վաճառականք կը հրաւիրուին տեսնել այս վաճառքներն եւ օգտուիլ ներկայ անակնկալ առիթէն:

ՏՕՔԹ. Է. ՉՈՒՔԼՕՍ

Մասնագէտ փորհի հիւանդութեանց (ստամոքսի, աղեաց) ինչպէս նաեւ ամբողջական օրհանգիստ:

Տօքթ. Է. Չուքլօս որ 17 տարի է ի վեր ի դուժ կը դնէ իր արուեստը, վերջեւայցելած է Եւրօպայի գլխաւոր հիւանդանոցները ուր մօտէն հետեւած է իր մասնագիտութիւնը կազմող հիւանդութեանց դարմանումի նորագոյն մէթօտներուն: Կը դարմանէ թէ՛ չփահաններու եւ թէ՛ աղոց ստամոքսի եւ աղեաց հիւանդութիւնները: Քիմիական տարրալուծում (որակական եւ քանակական) եւ մանրադէտական քննութիւն ստամոքսային հիւթերու: Կը բուժէ ելեկտրականութեամբ եւ մասսաժով: Կը դարմանէ ջերմամիդութիւնը իրեն յատուկ դրութեամբ եւ դեղերով: Հիւանդներ կ'ընդունին ամէն օր ժամ 9էն 12 եւ 2էն 5 (Ը. Ե.), իր բժշկարանին մէջ՝ Բերա, Տէրվիլ փողոց, Թէփէ—Պաշէի պարտէզին դէմ: Կիներուն համար սպասման տանձին սրահ: Ստամոքսի եւ աղեաց հիւանդութիւններէ առաւել աղքատները կ'ընդունին չորեքշաբթի օրերը ժամ 9էն մինչեւ կէս օր:

ԱՌԱՄ ՎԱՐԻԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամեն օրուայ քօնաֆիլէ պարանց

Մեծ—Շուկայ, Բիւրքճիկերու դրան կից, Թ. 41—43

Նայնպէս, արանց եւ կանանց հաշուեյարդարութեան վաճառատուն, Պաշիս, Սուլթան—Համամ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ թօնաֆիլէի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յատուկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն առկուելութիւն, եւ դիւրամտ չելի գիներու առաւելութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան:

Ադամ վարդեան մեծապէս գոհ թողացած է իր բազմաթիւ յաճախորդները: Կ'արժէ որ Շուկայ, Ելլադ ամէն ընտանիք այցելէ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հագալու համար:

ԱՐՄԵՆԱԿ ԻՆՃԷԵԱՆ

ՓԱՍՏԱՐԱՆ

Վկայեալ Բարիգի Իրաւագիտական վարժարանէն: Հաստատուած է Ղալաթիա, Մէհմետ Ալի փաշա խան, թիւ 35:

Կըստանձնէ պաշտպանութիւնը ամէն տեսակ դատերու՝ օսմանեան եւ օտար ամէն կարգի դատարաններու առջեւ:

ԶԱՐԵՀ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՎԻՐԱՐՈՅԺ—ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Վ Կ Ա Յ Ե Ա Ն

ԼԻՕՆԻ ԱՏԱՄՆԱՐՈՒԺԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ

Ե Ի

ՊԱՇԵՆԷ ԺԵՆԵՎԻ ԲՈՅԵՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ

Կը բուժէ ակուշի ամէն տեսակ ցաւեր եւ լիւտերու հիւանդութիւններ, կատարելաբար չորձեալ սիսթէմներով: Հիւանդ կ'ընդունին ամէն օր, Բերա, Մեծ Փողոց ԲՐԷՏԻ ԼԻՕՆԻ ղրմացը Կլավանի փողոց թիւ 2:

Երեքշաբթի եւ Ուրբաթ օրերը մինչեւ ցորեկ աղքատաց ակուշ քաշելը ձրէ է:

Եթե երախայ մը նիհար է՝ և չի զաւարիւր նէ, անորժակ չունի և կերածը կատարեալ չի մարսեր. նէ, և ակույնները — որոնք չեն մեծնարկօր նէ — որ բնականապէս միւս աղետները կ'աւելցընէ թող իրեն տրուի.



SCOTT'S EMULSION.

Ասիկայ մանկանց համար անորժեղի կերակուր և դէղ մըն է, և երախայն զայն խմած ատեն վերջի աստիճանի ուրախութեան մէջ կ'ըլլայ: Մայրը շուտով կը տեսնէ թէ ինչպէս երախային բոլոր վիշտերը անմիջապէս կը դադրեն. որպէս թէ նոր արիուն և նոր կեանք բոլոր անկարգութիւնները չնչելով, մանկան անտերը առողջութեան և զուարթութեան փոխադրեցին: Երախայն միշտ պատրաստ է այս նոր (ուտելիք և) քմակելիքին և անորժակով կըխմէ. Կըսկի զաւայել և պղտիկ ձերմակ ակուայ. ներք առանձնաւի և վիշտերու կ'ըսկիին երեան ելլել: Ըսգօթի Բաղադրութիւնը երախայից առողջարար գիրութիւն և զաւայելով կուտայ, մարսողութեան կ'օգնէ և մարմնոյ ընդհանուր զօրութիւն կը պատճառէ:

ԸՍԿՕԹԻ ԲԵՂԱԹՐՈՒԹԻՈՒՆ

Բոլոր աղայոց Սիրելին է և զանոնք շուտով վարդապոյն երեկոթի և զօրաւոր և կատարեալ առողջութեան պատկերներու կը փախէ: Ըսգօթի Բաղադրութիւնը՝ վրան այս նշանով վարդապոյն փաթեթի մէջ ծալուած շիշերէն կը ձանլցուի:

Շիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

Բոլոր գեղարմները և գեղալուծները և ծախէն:

ԳՈՐԾԱՐԱՆ

Գործի մաքրութեան եւ նորոգութեան

(Գրասենեակ՝ Մամուտ — փաշա, Թարսզգրար, Մեծ Նար Խանի կից, Թ. 37)

Այս հանրածանօթ գործարանին մէջ կը մաքրուին աղտոտած եւ փոշոտ թէ՛ մետաքսէ եւ թէ՛ բարդէ ամէն տեսակ ընտիր գորգեր, քիմիական դեղորէից միջոցաւ, առանց ո՛ր եւ է որոտ կամ հետք ձգելու: Ընդհակառակը, բոլորովին նոր երեւոյթ մը կ'առնեն այս գործարանին մէջ մաքրուած գորգերը:

Ունի նաեւ առաւելութիւն մը նոր գորգերու վրայ, այն է թէ՛ այս գործարանին մէջ մաքրուած գորգերը զերծ կը մնան ցեփերու (կիւվի) կեր ըլլալէ:

Կը նորոգուին նաեւ օրեւէ կերպով մնացած գորգեր:

Սոյն գործարանը կը ստանձնէ նաեւ պատրաստել նոր գորգեր, ինչ մեծութեամբ ու ճաշակով որ ուզուի:

Յանձնարարութիւնը պէտք է ուղուին գրասենեակը:

Դիւրամտալի պայմաններ:

ՏՈՔԹ. ՔԻՐԻԱՔՈՒ

Dr. Kiriakou Bander mali

Ջիդերու, լեարդի եւ usամօսի հիւանդութեանց մասնագէտ

Բարիզի հիւանդանոցներուն մէջ գործնել կան փորձեր կատարելով վերագրեալ հիւանդութեանց համար մասնագիտութիւն ձեռք բերած է: Իրեն դիմողները կը դարձան ամէն օր ժամ 7էն 10 Բերա Աղա Համամ հիլլենտ կան հիւպատոսարանին դէմ, թիւ 5 առնը, իսկ առտունները մինչեւ կէսօր Պոլիս կամուրջին գլուխը Դոսթաքի Արօէնաքի թիւ 71 դեղարանը: Քիչ ատենի մէջ կը դարձան շղային ակարութիւններ, լուսնոտութիւն, անդամալուծութիւն, գլխու ցաւ, սրտի բաթաւամ, անքունութիւն, ափրդիտեան ախտ, լօղացաւ, ստամոքսի հիւանդութիւններ, դժուարամարտութիւն, ալգանդի հիւանդութիւն եւ այլն: Դարմանման համար ներարկումով ելեկտրականութիւն կը գործածէ: Ելեկտրական դարմանի համար մասնաւոր սրահ մը կայ:

ՄԱՍԻՆ

54^ր ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻ 20

15 ՄԱՅԻՍ 1904

ԳՐՈՂԻՆ ՊԱՐՏԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ(?)

Գրողին պարտաւորութիւնն էր... Բայց մարդ մը՝ զոր օրինակ գրող մը, արուեստագէտ մը, որ իր բարոյական և նիւթական որոշ իրաւունքները չունի, ինչպէ՞ս կրնայ պարտաւորութիւններու տէր ճանչցուիլ, և հրաւիրուիլ որ հաշիւ տայ իր վրայ ծանրացող պատասխանատուութեանց մասին:

Նախ հասկնանք թէ ի՞նչ է գրող ըսուածը մեր մէջ: Մարդ մը որ գրականութիւն կ'ընէ, որ երբեմն աղուոր բաներ կը գրէ և միշտ աղուոր բաներ գրել կ'ուզէ մեզ զբօսցնելու, մեզի գեղեցիկ ժամանցներ պարգեւելու, և կամ մեզ զարգացնելու, մեր ծանօթութեանց չրջանակը ընդլայնելու, մեր հոգին բարձրացնելու համար:

Այդէ, բայց մե՞նք ինչ կ'ընենք այդ պատուական մարդուն համար որ այնքան հոգածու կ'երեւայ մեր մտքին ու սրտին զարդացման, մեր հաճոյքներուն, մեր զբօսանքներուն նկատմամբ: Կը վճարենք արդեօք անոր, կը վարձատրենք այն աշխատութիւնը զոր կը սպառէ մէր սիրոյն, կը հոգանք անոր վիճակը, նեղութեան մը միջոցին անոր օգնութեան կը հասնի՞նք, անոր ծերութիւնն ու անկումը կը դարմանենք:

Ո՛չ, անանկ չէ՞: Ընդհակառակը կը շահագործենք զայն, անոր զրկանքներուն ու նեղութեանց արդիւնքը կը վայելենք ու քիթին կը խնդանք, կը փնտռենք զինքը՝ երբ վստահ ենք որ մեր քսակին չպիտի դպի, բայց մեզի պէտք ունենալուն պէս զինքը չտեսնելու կը զարնենք, իր արտադրութեան մասին անտարբեր կ'երեւանք, չենք ուղեր յայտնել թէ իր գոյութենէն տեղեկութիւն ունէինք:

Ուրեմն ի՞նչ իրաւունք ունինք իրմէ հաշիւ պահանջելու, իրեն համար պարտաւորութիւններ սահմանելու, այդ պարտաւորութեանց կատարման եղանակը քննադատելու, դժգոհելու կամ դատապարտելու:

Գրականութիւնը մեր մէջ ալ արուեստ մը կը նկատուի, բայց ամէն արուեստ իր որոշ պատասխանատու արուեստաւորը ունենալու համար պէտք է նախապէս ապրուստի միջոց մը ըլլայ: Ամաթէօռ լուսանկարիչ մը չենք այսպէս անշուշտ՝ երբ անշուշտ լուսանկարներ կը չինէ. բայց արհեստով լուսանկարիչը՝ որուն կը վճարենք, չարդարանար մեր աչքին՝ եթէ անճոռնի բան մը ըլլայ արտադրածը: Դրամը մեզի իրաւունքներ կուտայ իր վրայ, և իրեն համար ալ պարտքեր կը սահմանէ. որչափ ատեն որ կը վճարենք, կրնանք մեր իրաւունքները ի գործ դնել, իրմէ հաշիւ պահանջել, և ստիպել զինքը որ իր պարտքերը կատարէ:

Մեր գրողներն ալ, ամաթէօռներ են միայն. գրականութեան արուեստը զիրենք չապրեցներ. մենք ոչինչ կ'ընենք իրենց աշխատութեան համապատասխանող վարձատրութիւն մը հայթայթելու համար: Եթէ կան ալ վարձատրուողներ՝ առածնին շատ աննշան բան մըն է, ու ո՛ր է կերպով չի կերտար համեմատութեան դրուիլ իրենց աշխատութեան հետ: Հետեւաբար, իրենց ըրած գրականութիւնն ալ չի դադրիր ամաթէօրի գրականութիւն մը ըլլալէ:

Եթէ մենք մեր գրողները պէտք եղած կերպով վարձատրէինք, բնական է որ պարտադանդութեան մը պարագային կրնայինք իրաւունք ունենալ անոնց հարցնելու թէ

ո՛ւր կը մնան ձեր պարտքերը, թէ մեզմէ պահանջած դրամներ փոխարէն ի՞նչ կուտաք մեզի, ո՛ւր կը մնայ մեր իրաւունքը: Ընդհակառակը, հիմայ մեր գրողներն են որ կրնան մեզի հարցնել թէ ի՞նչ կը վճարէք, ի՞նչ քաջալերութիւն կ'ընէք որ ձեր քեյֆին դերի դառնանք, ձեր քմահաճոյքներն ու պահանջումները դոհացնենք, ձեր պէտքերուն հասնինք: Եթէ իրենց ըսե՛ք ալ որ դուք լաւ գործ տեսէք ու մենք ան ատեն կը վարձատրենք, անոնք կրնան մեզի պատասխանել թէ լաւ գործ արտադրողներն ալ մեր մէջ անօթի միացած են, թէ էապէս արուեստագէտ նկատուող գրողներն ալ թշուառ մեռած են՝ առանց ո՛ր և է օգնութիւն մը տեսնելու:

Եւ զարմանալու տեղի չկայ՝ եթէ այդ պատճառաւ իսկ ամաթէօռի գրականութենէ մը անդին չեն անցնիր, կը գրեն ինչ որ իրենց հաճոյ կը թուի, առանց նկատի առնելու թէ հասարակութիւնը իր ըմբռնումներուն կամ ձաշակին յարմար պիտի գտնէ՞ իրենց գրածը:

Մարդ որչա՛փ ալ հարուստ ըլլայ, տարբեր ջանք մը, տարբեր ձգտում մը ու եռանդ մը կը դնէ այն գործին մէջ՝ որ իրեն դրամ պիտի բերէ: Արուեստի յղացումներուն էական ջիղն ալ արդէն դրամն է: Ամաթէօռ գրողներ ու արուեստագէտներ երբեք չեն կրցած նշանաւոր ու գրաւիչ դառնալ ա՛յնչափ որչափ որ կրցած են ըլլալ իրենց արտադրութիւններէն դրամ ակնկալող գրողներն ու արուեստագէտները: Իրաւ է, բարոյական վարձատրութիւնն ալ, — արտայայտուած իսկապէս գիտակից և աննենգ եղանակներով, — կրնայ այդ կարգի արդիւնք մը առաջ բերելու նպաստել, բայց վերջի վերջոյ կը յղիւցնէ, կը ձանձրացնէ, մինչդեռ նիւթական վարձատրութիւնը, աշխատութեան ու տաղանդին ճշմարիտ գնահատումը, շարունակ կը դրդէ միշտ աւելի լաւը, միշտ աւելի կատարելալը հետապնդելու:

Այնչա՛փ նշանաւոր տաղանդներ եթէ փճացած են և կամ կանխահաւ մահուամբ մը անհետացած, պատճառը նիւթական վարձատրութեան պակասը եղած է: Զոլան՝ նիւ-

թական չահու տարբեր պայմաններու մէջ մտքի այդ բարձրութեան ու գեղեցկութեան չպիտի կրնար հասնիլ անշուշտ, մինչդեռ նոյնչափ տաղանդաւոր գրողներ և արուեստագէտներ ինչպէս վիլիէ տը լի՛ Ատան ու Պիդէ՝ այնքան խստմնալից ըլլալով հանդերձ մեռած են աղքատ, երիտասարդ տարիքի մը մէջ, աակաւին ինքզինքնին յայտնելու, իրենց տաղանդին բովանդակ գորութիւնն ու բարձրութիւնը արտայայտելու միջոցներ չուենցած:

Գրողն ու հասարակութիւնը փոխադարձ պարտաւորութիւններ ունին իրարու նկատմամբ: Անո՞ցմէ ոչ մէկը կրնայ միւսը մեղադրել պարտագանցութեան յանցանքով, երբ ինք իրեն բաժին ինկած պարտաւորութիւնները չի գոհացնիր: Որովհետեւ երկուքին պարտաւորութիւնները առանձինն չեն կրնար գոյութեան իրաւունք ունենալ, այլ իրարմով միայն: Փոխադարձ պարտաւորութիւններով իրարու կապուած ըլլալ, իր պարտքը չկատարել և ինքզինքին իրաւունք տալ դիմացինը անպատճառ պարտքի հատուցման բռնադատելու, ասիկա տեսակ մը գործ է որ անուն չի կրնար ունենալ, և զոր բարոյական ո՛չ մէկ նկատում պիտի կրնայ երբեք արգարացնել:

Գրողին պարտաւորութիւնները... աղէկ, բայց նախ մէյ մը փնտռենք թէ ո՛ւր կը մնան հասարակութեան պարտաւորութիւնները գրողին հանդէպ, ի՞նչ կերպով կը գոհացունին, ի՞նչ պայմաններու տակ կը հատուցունին: Փնտռենք, այո՛... բայց ո՛ւր, որո՞ւ քով, ո՞ր ժամանակ...:

Անոնք որ գրողին պարտաւորութիւնները ճշդելու, պարտադանցութիւնները ձաղկելու և դատապարտելու համար այս անսովոր վիճակներ փրցուցին, թո՛ղ անգամ մը հաճին անձամբ այդ փնտառութիւնը ընել: Թո՛ղ խուղեն, քրքրեն, երեւան հանեն թէ հասարակութեան պարտաւորութիւնները ինչ կ'ըլլան, ո՛ւր կը կորսուին որ չենք տեսներ: Ապա թէ ոչ, իրենք քանի՞ գրողին պարտաւորութիւնները պոռան, գրողներն ալ այնչափ պիտի հարցնեն իրենց.

— Հապա գրողին իրաւունքները...

ՄԷՐՈՒՏԻՍ

ՄՈՌՅՈՒԱԾ ԻՋԵՐ



«Նորերու բաժին»ին հետ, ուր ընտրանօք կը հրատարակենք բանաստեղծական նախափորձեր՝ առ ի խրախոյս, հետաքրքրական կը համարինք մեր գրասէր ընթերցողներուն և մասնաւորապէս նոր սերունդին համար, «Հիներու բաժին» մըն ալ, կամ «Մոռցուած էջեր»ու գլուխ մը բանալ, ուր պիտի հրատարակենք քերթութիւններ ու հատուածներ՝ քառորդ դար կամ աւելի առաջուան մեր գրագէտներէն ու բանաստեղծներէն, որոնք կա՛մ մեռած են և կա՛մ կ'ապրին մեր շուրջը՝ բայց մեկուսացած են գրական հրապարակէն։ Առաջին անգամուան համար կը հրատարակենք բարեյիշատակ գրագէտ—բժիշկ Տօքթ. Նահապետ Ռուսինեանի թարգմանութիւնը Վիքթօր Հիւկոյի մէկ ոտանաւորին, 1865ին կատարուած ու հրատարակուած այստեղ։

Ո՛Վ ԻՄ ՓԵՂԵՅԻԿ



Թէ կայ 'նդ ցօղով եթերաց
Եդեմ երջանիկ,
Ուր փողփողի մըշտաբաց
Նորանոր ծաղիկ.
Ուր քաղել է բարդ ի բարդ.
Շուշան, յատիկ, այծիվարդ,
Ձանի քու ոտիցդ ընեմ
Ճեմարան նաղիկ։

Թէ կայ 'նդ պատուոյն օրինօք
Լանջ սիրազդեցիկ,
Որ զանձն ի սպաս և ի հոգ
Տայ անայլայիկ.
Եւ թէ այս սիրտ սիրալիր
Տրօփէ միշտ ընդ փաստ ընտիր,
Ձանի ես քու ճակատիդ
Բա՛րձ ընեմ փափկիկ։

Թէ կայ 'նդ սիրոյն հովանեաւ

Երազ վարդաբուրիկ,

Ուր ըզմայլեն անդըրաւ

Ժպիտք համբուրիկ.

Երազ երիցս երանի

Ուր հոգի 'նդ հոգւոյ խառնի,

Ո՛հ, զանի ես քու սըրտիդ

Բո՛յն ընեմ գողարիկ։

Քարզմ. ՌՈՒՍԻՆԵԱՆ

1865

Վ. ՇԻԿՈ

(Ճաղփ վերջալուսոյ)

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԷՆ



ՌԱՏՐՈՆԻ ՅԻՇՍՏԱԿՆԵՐ.—Յ. ԴՈՒՐԳԷՆ
ԱՊԱՐԵՆԱԾ ԵՒ Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵՍՆ.
ՀԻՒՍՆԴ.—ՊԱՐԱՀԱՆԴԷՍԻ ՄԸ ՎԱ.
ՂՕՐԴԱՅՆԸ։

Օրթագիւղ իր վրայ խօսեցնել կուտայ վաղուան Նուաբանդէսովը որուն առթիւ կը յիշատակուի Թարգմանչաց և Հռիփսիմեանց վարժարաններուն երբեմնի փայլուն վիճակը։ Ու ճիշդ նոյն եօթնեկին սկիզբը, ուր այդ կրթական անցեալը դրչով ու խօսքով կենդանացնելու փորձեր կ'ըլլան, մըղում տալու համար երաժշտական ցերեկոյթին արդիւնաւորմանը, պարզ՝ անշուք մահ մըն ալ կուգայ կենդանացնել թատերական անցեալը միեւնոյն գիւղին։ Սեպուհ աղա Էսկիճեանին անունը,—գրեթէ անծանօթ անուն մը հանրութեան համար,—Օրթագիւղիներուն մտքին մէջ կ'արթնցնէ յիշատակը բեմական գործիչի մը, amateur դերասանի մը, որ իր երիտասարդութեանը՝ հիմնադիրներէն ու զարգացնողներէն մէկը եղաւ «Բարեսիրաց» մարմինն։ Աղամեանը աղուամաղ պատանի մըն էր դեռ այն ատեն, Մնակեան իր նախափորձերը կընէր, և Տիկին Փասուլեանեան,—ո՛ղջ թէ մեռած այս պահուս, ո՛վ գիտէ,—մանկամարդ դերասանուհի մը որ Հրաչեան

կը կանխէր. Օրթագիւղի փոքրիկ թատրոնը, դեռ մինչև այսօր կանգուն՝ իր կիսափուլ վիճակին մէջ, Պալեան Յակոբ պէյի ծախքով վերաշինուած ու զարդարուած, շքեղ ներկայացումներու շարքեր կը կազմակերպէր որոնց մասնակցողներուն մէջ վճարուած դերասան չիկար... ո՛չ ալ գեղեցիկ սեռ: Ձեռնարկը զուտ բարեսիրական, ու թատերասիրական էր ու խաղացողներն ամէնքն ալ արուեստասէր. և սակայն կուտային ներկայացումներ որոնք, սուամ թէ գօմէտի, պիտի կրնային մրցման մաս ել արուեստով դերասաններու է՛ն շքեղ երեկոյթներուն հետ: Սեպուհ Էսկիճեանին վիճակուած էին grand premier rôleերը, որոնց մէջ գերազանցելուն բնածին յատկութիւն մը ունէր կարծես: Եւ այն վտիտ անձը, անողոք՝ կրծող հիւանդութենէ մը ծիւրած մարմինը զոր հողին յանձնեցին անցած կիրակի, 70ական թուականներուն՝ իր պարթև հասակովը, գոռ ձայնովը ու խնդալ չգիտցող դէմքովը սարսուռ մը կ'ազդէր հանդիսականներուն՝ երբ կերեւար բեմի վրայ: Այսօրուան Օրթագեղի երիտասարդներէն ու նոյն իսկ տարեցիներէն շատեր, այն ատենը տակաւին տղայ կամ պատանի, կրած են այդ սարսուռը, ու երբ կարդացին մահագոյժը Սեպուհ աղային՝ անշուշտ յիշեցին «Փարաւոն»ը, — Մովսէս մարգարէ թատերախաղին մէջ, — զոր այնքան ճարտարօրէն կը ներկայացնէր ան: Ու ամէնէն աւելի յիշելու է խաղին հեղինակը՝ Թովմաս Թէրզեան, որ իր ուրիշ մէկ թատերագութեանը, Անառակ ուղիին ներկայացմանը քոթիւ ալ առաջին շնորհաւորողը կ'ըլլար Սեպուհ Էսկիճեանը՝ անառակ որդիի դերին մէջ: Մեղի ծանօթ դերասաններուն մէջէն՝ ամէնէն աւելի Պէնկլեանին կը նմանէր այս հին արուեստասէրը որուն անունը առաջին անգամ... իր մահուանը առթիւ, իր մահադրովը միայն երեւցաւ թերթերուն մէջ. վասն զի, որչափ որ կը յիշեմ, Օրթագիւղը ինքն իր մէջ կ'ապրէր ինչպէս իր դպրոցական՝ այնպէս ալ բեմական կեանքը, և հաղիւ երբեմն Մասիս օրաթերթին մէջ կ'երեւային ներկայացման հակիրճ ազդերը.

ո՛չ compte—rendu, ո՛չ դրուատական. «Բարեսիրաց»ին անդամները, որոնց մէջ ճշմարտագէտ արժանիքի տէր դերասաններ կային, — ինչպէս Թովմաս Պէնկեանց, շատոնց մեռած, ու ողջերէն՝ Մովսէս Փափաղեան, և Գրիգոր Բիթապճեան զաւեշտական ճիւղին մէջ, — յաւակնութիւն չունէին և չէին ըմբռնել իրենց կատարած բեմական գործը, զոր շատ համեստ կը նկատէին, գովուելիք բան մըն էր: Ու անկեղծապէս փարած ըլլալուն համար այս գաղափարին, անծանօթ մնացին գիւղէն դուրս, ընդհանուր համայնքին: Պէտք է խոստովանիլ թէ այն ատենի լրագրութիւնը հիմակուան պէս չապլ չէր համարատուութեան, ու սիւնակներ չէին գրաւէր դպրոցական պարզ հանդէս մը, թատերական երեկոյթ մը, հարսնիք մը:

Նոյն իսկ Թ. Թէրզեան ու Ս. Թլլեան որոնք ամէն շրջանի համար քանի մը թատերախաղ կը պատրաստէին, — առաջինը հեղինակելով ու երկրորդը թարգմանելով, — հազիւ երբեմն կը յիշուէին այն ատենի մամուլին մէջ իրենց երկերովը, մինչդեռ այսօր՝ կը բաւէ ոտանաւորի հատորիկ մը, թարգմանուած վիպասանութիւն մը կամ dialogue պատկեր մը, ընտանեկան տեսարան մը գրել հրատարակել, բանաստեղծ, վիպասան, թատերական հեղինակ հռչակուելու համար: Ու ասոր համար է որ չիացած, յաւակնոտ սերունդ մը կը հասնի հետզհետէ մեր մէջ, և արդէն իսկ հասածներէն, ժամանակին հետ անուն մը շահած բանաստեղծներէն կամ գրագէտներէն շատին հետ կարելի չէ խօսիլ առանց մեծարալից նախադասութիւններու, ու բաղմաթիւ առիթներով տրուած հրապարակային գովեստներ, գնահատականներ կը փճանան՝ միակ, անմեղ տողի մը առջև որ չէ թէ քննադատութիւն ըլլայ, այլ զիտուութեան մը երեւոյթը ունենայ: Դեռ շատ թարմ է յիշատակը Յովհ. Գաղանճեանի թեթեւ բառախաղին որ Ալփասլանը հեռացող գրական հրապարակէն:

Սեպուհ Էսկիճեանն ալ, իր ընկերներուն պէս, մասնաւոր շրջանակի մը մէջ միայն ճանչցուեցաւ: Հիմակ, իր մահուան վա-

ղայաջորդ օրը, ա'լ ուշ է՝ պրպտելու համար աւելի քան երսուն տարուան յիշատակները իր բեմական գործունէութեան, իր կատարած դերերուն: Իր ժպտիլ չգիտցող զէմքը յիշեցի. և արդարեւ, թատրոնին դուռնէն ներս, խոժոռութեան ու խստութեան մարմնացումն էր այս մարդը. երբեմն կատակերգութիւններու իսկ կը մասնակցէր, բայց մի'շտ լրջութիւն, ծանրութիւն պահանջող դերերով, ինչպէս Պ. ՏՐ ԲՈՒՐՍՈՆԵՒԱՖԻ մէջ ուր բժիշկ կ'ըլլար և դրաբար կը խօսէր, — բնագրին մէջ լատիներէն ըլլալուն այդ դերը՝ թարգմանիչը գրաբարի վերածած էր, — թէ և ո'չ Ոսկեդարու դրաբար մը, զոր Յ. Գուրգէն, ինքն ալ մասնակից «Բարեսիրաց»ին, բժիշկին աշակերտին դերը կատարելով բեմի վրայ, աշխարհաբարի կը թարգմանէր: Ճաշակ Ոսկեկէն Դալուքեանի ապագայ խմբագիրը, այն ատեն դեռ չա'տ երիտասարդ, մտքէն չէր անցուներ թերեւ թէ ապագային մեր ժամանակակից մատենագրութեան մէջ, ճիշդ հակառակ դեր մը պիտի կատարէ, աշխարհաբարէ գրաբարի թարգմանութեան նուիրելով ինքզինքը:

Դրաբարեան թէ աշխարհաբարեան, անխառն հաճոյքով էր որ ողջունեցինք Գուրգէն էֆ. ի ապաքինումը իր բաւական ծանր հիւանդութենէն և կը յուսանք տեսնել զինքը, դպրոցական արձակուրդներէն ետքը, իր ուսուցչական պաշտօնին գլուխը անցած թէ՛ կեդր. վարժարանին մէջ, ուր իրեն յաջորդել բաղձացող թեկնածուները քիչ մը չատ աճապարեցին, և թէ՛ ուրիշ ամէն տեղ ուր կը դասախօսէր: Այս հաճոյքին հաւասար ցաւով մը, և դառն ցաւով մըն էր որ իմացուեցաւ յանկարծ, պարբերաբար կրկնող գոյժի մը պէս, թէ եղիա Տէմիրճիպաշեան կը փախազի նորէն. Հիւանդանոց երթալ՝ պատասպարուելու և դարմանուելու համար: «Ազգին Տան» դուռը որ անխտիր բաց է ամէն անհատի առջև որ կարօտ է և հիւանդ, բնականաբար ո'չ միայն չի փակուիր տարաբաղդ իմաստասէր — գրագէտին՝ այլ բացառիկ խնամքներ ու հոգածութիւններ կը նուիրուին հոն անոր, եթէ իրօք երթայ Հիւանդանոց, ինչպէս եղաւ առաջին անգամ:

Բայց ինչո՞ւ եղիան երթայ Հիւանդանոց, ինչո՞ւ խեղճ ու թափառայած ըլլայ, ու պտտի մաշած հագուստներով: Այս պէտք էր ըլլար մեր մեծ գրագէտին վախճանը: Ոչ ոք միտքէ անցունել կուզէ, թէ Նիրվանային երգիչը՝ գրագէտի տիտղոսին կը միացնէ ուսուցչի տիտղոսը, և երկար տարիներ դասախօսած է մեր վարժարաններուն, մանաւանդ կեդրոնականին մէջ ուր իր ճշմարիտ արժանիքով էր որ ստանձնած էր աշխարհիկ գրականութեան դասաւանդութիւնը և ո'չ թէ ասոր անոր քծնելով ձեռք ձգած էր այդ դասախօսի պաշտօնը: Ի՞նչ բանի պիտի ծառայէ ուրեմն Ուսուցչաց Օգնութեան Մատուկը, ի՞նչ տպաւորութիւն կրնան թողուցած ըլլալ մտքերու և սրտերու վրայ՝ անկեալ գրագէտներուն օգնութեան ձեռք կարկառելու խտէլակա՞ն դշուածքները, եթէ շարունակենք տեսնել Դրաբար Ատոմը այս թշուառ վիճակին մէջ:

Ամէն անգամ որ կիմանամ անկեալ վարժապետի մը, — թէ և չըլլայ եղիա Տէմիրճիպաշեան մը. — կարեկցութեան կարօտ, լքեալ վիճակը ու միւս կողմէ կը կարդամ երկարածիք շարքը Ուսումնական Խորհուրդի որոշումներուն, Ուսուցչաց Օգնութեան Սընտուկին եղած նուիրատուութիւնները և ուրիշ բարեսիրական նպաստներ, կը յիշեմ Օրթագիւղի դպրոցին նիւթական պէտքերը հոգալու համար տրուած այն ընտանեկան չքեղ պարահանդէսը, որ քանի՜ մը հարիւր ոսկի հասոյթ արտադրեց և որուն գիշերը, — դժբաղդ զուգադիպութեամբ մը — այն ժամուն ուր վախերն իրենց է'ն ողբերգութեամբ չըջանին մէջն էին և դաշնակը իրէ'ն զգլխիչ եղանակները կը նուագէր, անդին՝ ոչ չատ հեռու դպրոցին սրահէն ուր կը տրուէր այս նպաստի երեկոյթը, գիւղին ծերունի վարժապետը, Եզէկիէլ Պատուելի, հոգին կ'աւանդէր կէս — կուշտ՝ կէս — անօթի: Խեղճը, այն գիշերը, հաղիւ կրցած էր աման մը մածուն ձարել, և սլառմեցին թէ անսուղուութիւնը փութացուցած էր իր մահը: Թէ և, այս «աննշան» համարուող զէպքը արգելք չեղաւ որ յաջորդ օրը պարահանդէսին արդեւաբար

դերը, հաճելի ժամանցները, չքասեղանը, դժբխեօնը նկարագրուէին լրագրաց մէջ, ենթադրական հասոյթի գումարովը մէկտեղ որ լայն շունչ մը առնել տուաւ Թարգմանչաց վարժարանի մատակարարներուն. մինչ Եղէկիէ վարժապետը կը տանէին կը Թաղէին երկու քահանաներ, ու խօսքն անգամ չեղաւ այդ կրթական հին աշխատաւորին, չխանգարելու համար պարահանդէսի վաղօր-դայինն հեշտ տպաւորութիւնը:

ԽԵՆՍՍԻՐ

ԲԱՂԴԱԶՈՒՐԿԸ

(ՆՈՐԱՎԷՊ)

Դժբաղդէ կին մըն է եղած Տիրուհի, դժբաղդէ՝ այն օրէն որ անյարմար ամուսնութիւն մը անխորհուրդ և անհաշիւ կերպով վճռուած՝ վերջ տուաւ իր գեղածիծաղ կեանքին:

Այն ատեն՝ Գատըգիւղ, ուր կը բնակէր ընտանեօք, թէև բաղմամարդ չէր հիմակուան պէս, բայց աղնուական ու հարուստ դասակարգի պատկանող ընտանիքներ պզտիկ թիւ մը չէր որ կը կաղմէին: Ընտանեկան հաւաքոյթները, յաճախակի այցելութիւններն ու պտոյաները գլխաւոր ժամանցները կը կաղմէին հոն՝ աշխարհիկ ղուարճութիւններէ աւելի, որոնք տարին քանի մը պարահանդէսներէ անդին չէին անցներ: Այսպէս, էդիքէթի տաղտուկներէ հեռու, խաղաղ բայց երջանիկ կեանք մը կը վարէին, ինչպէս գրեթէ բոլոր գիւղերուն մէջ:

Տիրուհիին ներկայութիւնը փայլն էր այդ համախմբումներուն: Ամէնուն պաշտումի ու սիրոյ առարկան էր ան: Հիանալի կերպով նուրբ ու գեղեցիկ աղջկան մը բոլոր հրապոյրներուն հետ, շնորհալի բարեկրթութիւնն ու զարգացումը, մէկ հատիկ ըրած էին զինքը գիւղին մէջ ուր շատ մը սիրտեր զրաւած էր: Աչքերը մանաւանդ, խաթուկ ու աղուոր, որոնք չրջանակուած էին սև թարթիջներէ՝ կարծես աւելի անուշութիւն մը կուտային իր

նուաղկոտ ու միանգամայն ցոլացիկ նայուածքին:

Յորդորներու, խրատի կարօտը չունէր ան. ունեւու և դաստիարակուելու, տիպար ու անթերի աղջիկ մը ըլլալու եղանդը ինքնաբոլոր էր իր մէջ, ու ծնողքը հրճուելէ զատ բան մը չունէին ընելիք: Բնաւորութեամբ արդէն չէն ու զուարթ, իր շուրջը ճոխութիւն և առատութիւն միայն տեսած էր: Ունեւոր էին ծնողքը որոնց մէկ հասիկն էր:

Նւ սակայն երազի պէս անցան այդ աղուոր օրերը, ուր հոգ ու մտածում դեռ պաշարած չէին զինքը, ոչ իսկ սիրոյ տալանքները, որոնք այն ինչ պիտի գային անոյ վրդովանք մը տալ կեանքին, իր տանըութը զարուհներուն մէջ:

Ո՞վ արդէն միջոց պիտի տար ատոր: Գիւղին էն շնորհքով ու հարուստ երիտասարդները, ամուսնութեամբ միայն անոր սէրը վայելելու դրական ու փութկոտ մտածումն ունեցան ու ձեռքը խնդրեցին Տիրուհիին: Ասիկա բաղդի մը տիրանալու մրցում մըն էր պարզապէս որ սակայն տխուր վախճանի մը յանգեցաւ, վասն զի, Տիրուհի իր կամքին տէրը չէր ա՛լ, ու ծնողքը հետեւելով իրենց մեծերուն տգեղ սովորութեան, իրենց զաւկին կեանքի յեղաշրջման զեկը ձեռք առած էին: Ու Տիրուհի թէև հլու և հնազանդ աղջիկ՝ կը խորհէր թէ իր կարծիքն ալ կշիռ պիտի ունենար անշուշտ այդ կենսական հարցին մէջ՝ իբրև ենթական, և սակայն ոչ ոք բան մը կը հարցնէր իրեն: Զարմանալի բան. զինքը ուղղորդներէն այն դիրքի տէր զարգացած ու գեղեցիկ երիտասարդները մանաւանդ, զոր գիւղի աղջիկները ձեռքէ ձեռք կը խլէին՝ անխնայ կը մերժուէին իր ծնողքէն՝ առանց իր հաւանութիւնը առնուելու: Ու ծնողքը միւս կողմէ մտերմութիւն մը հաստատած էր մարդու մը հետ որ քաջուած կեանք մը ունէր գիւղին մէջ և իրենցմէ քիչ հեռու կը բնակէր իր պառաւմօրը հետ:

Այս անտեղի ու յանկարծական մտերմութիւնը մտածել տուաւ Տիրուհիին. տեսակցու-

թիւնները կաւելնային, երկու կողմէ պատիւ-
ներ կը շուայուէին: Ու Տիրուհի ապշահար՝
այս անհաճ և անակնկալ երեւոյթին առջև,
վախցաւ թէ մի՛ գուցէ բաղդը, որ ժպտած
էր իրեն մանկութենէն ի վեր, զինքը լքէր
հիմա. և այնպէս ալ եղաւ:

— Աղջի՛կս, ըսաւ օր մը հայրը, որ դա-
ւառացի միամիտ՝ բայց յամառ ծերուկ մըն
էր, ես իմ հայրական պարտաւորութիւններս
ընելու եմ իմ ողջութեանս. մենք աւելի
փորձառու ենք ասանկ խնդիրներու մէջ.
Գրիգոր աղան լուրջ, ընտանեւէր և գործունե-
այ մարդ մըն է. մայրդ ալ իմ կարծիքէս
է թէ անկից աղէկ մէկը չի կար քեզի ու-
ղողներուն մէջ:

Գրիգոր աղան իրեն ամուսին. շանթահար
եղաւ Տիրուհի. այս անգամ փորձեց ընդվզիլ,
բայց ի դժուր. որոշումը անդդուելի էր և
ատկկա իր մահալճիւնէր. մինչդեռ ծնողքը,
այդ տգէտ ամբարտաւանները, աղէկ գործ
մը կատարողի և իրենց զաւկին համար եր-
ջանիկ կեանք մը պատրաստողի գոհունակու-
թիւնը ունէին: Հիմա Տիրուհի մոլորած թըռ-
չունի մը երեւոյթը առած, ճար մը կը փնտ
ռէր ճողոպրելու համար հարուածէն, զոր
նոյն իսկ իր ծնողքը իրեն դէմ կ'ուղղէին.
միջոցներ կը խորհէր դարձի բերելու համար
զանոնք, որ կարծես կուրցիր էին. հաւտալը
չէր գար որ իր ձայնը, աղաչանքը անլսելի
պիտի մնային այսպէս, մինչդեռ չփացնելու
աստիճան անոյշ և հաճոյակատար գտնուած
էին իրեն հանդէպ մինչև այն ատեն: Վեր-
ջապէս որոշեց հրաժարիլ աշխարհի բոլոր
վայելքներէն և իր ընտանիքին քովիկը ապ-
րիլ, փոխանակ կենակցելու այնպիսի մէկու
մը հետ, որուն համար պզտիկ համակրութիւն
մ'իսկ չէր ղգար:

Բայց խօսքկապը հապճէպ կերպով լրաց-
նել կուղէին, Գրիգոր աղային ստիպումնե-
րուն վրայ. երկու կողմէն փութկոտ պատ-
րաստութիւններ կը տեսնուէին հարսնիքի
համար, առանց կարեւորութիւն ընծայելու
Տիրուհի ընդդիմութեան, զոր աղջկան մը
վայել ամօթխածութեան և համեստութեան
կը վերաբերէին: Ու Տիրուհի՝ պարտուած և

ջլատուած իր անմիտ բայց զօրաւոր հակա-
ռակորդներէն, ա'լ բեռ մը նկատեց ինքզինքը
իր ընտանիքին վրայ, ու խորհելով թէ
անոնցմէ վայելած լիառատ բարիքները փո-
խարինած պիտի ըլլար հնազանդութեամբ և
անձնագոհութեամբ, խոնարհեցաւ իր ճակա-
տագրին առջև:

Նշանախօսութենէն շարաթ մը վերջը,
ամուսնութիւնը կատարուած լինցած էր:

* * *

Որո՞ւ մտքէն կ'անցնէր Գրիգոր աղային
այս յաղթանակը որ ամէն ոք ապշեցուց. ան-
հաւատալի՛ բան. եղած աւարկութիւններն
ու դժուարահաճութիւնները յուսալ կուտային
թէ տիպար ու լաւագոյն ընտրութիւն մը
սահմանուած էր Տիրուհիին համար, մինչդեռ
այդ բոլորը դժոխք առաջնորդելու զօրեր են,
խեղճ Տիրուհին: Համակիրները զայրացած
այս անշնորհ միութեան դէմ, քիչ ատենէն
կը կարծէին խամրած տեսնել այդ շնորհագեղ
կինը. ամէնուն պաշտումի առարկան, հիմայ
ամէնուն կարեկցութիւնը կը հրաւիրէր իր վրայ.
վասն զի ամուսինը, քառսունի մօտ վտիտ ա-
րարած մը, թէև հարուստ հասառու, բայց այն
հարուստներէն էր, որոնց խելքը, միտքը,
կեանքը դրամն է և անկէ դուրս ամէն բան
ունայն: Այսպէս, անհաճոյ կը թուէին իրեն,
Տիրուհիի շնորհալի շարժուածքները, ժպտուն
ու գուարթ խօսուածքը, շքեղ արդուզարդը.
ո՛չ, այդ բոլորը մէյ մէկ գայթակղութիւն-
ներ էին իր աչքին. իր խոժոռ դէմքը չէր
փոխուեր երբեք և արդար պահանջկոտի մը
երեւոյթով կը սպառնար կնոջը յեղաշրջել
այդ անշնորհ բնաւորութիւնը ու ապրիլ
կուռքի կեանքը, իր կեանքը, յարմարիլ իր
նիւթապաշտ գաղափարներուն: Կալուածներու
և վարձքերու շուրջը կը դառնար իր խօսակ-
ցութիւնը, ամէն օր, շարունակ, նոր ու հե-
տաքրքրաշարժ բան մը զրուցել կարծելով,
մինչդեռ ո՛վ գիտէ քանի անգամներ ճառած
էր ատոնց վրայ:

Դաշնակը լուռ ու լքուած կը մնար սալօ-
նին անկիւնը ու Գրիգոր աղա բաղմոցին մէկ
ծայրը նստած կը խորհէր, կը հաշուէր,
գանգաւաններ կը պատրաստէր իր վարձակալ-

ներուն ուղղելու համար, նիւթապէս դըժ-
բաղդ և անկեալի մը, նոյն իսկ կործանելու
վրայ եղող մարդու մը խոփու ու շուարած
երեւոյթը առնելով:

Այցելութիւններ տալու և ընդունելու
սովորութենէն կը խորշեր պարզապէս. տու-
նէն վար չէր իջնար իր տկարակաղ մութեան
պատճառաւ ու պէտք մըն ալ չունենալուն.
իր գլխաւոր հաճոյքը, դրօսանքն ու վայելքը
տունը նստիլն էր ու անեցիկները նստեցնելը.
Ինչ կեանք. ասոր համար էր որ զինքը լուրջ
և ընտանեակէր հռչակած էին: Տան վարդը
ըլլալու կոչուած իր կինը ուրեմն, հիմա
ամէն ինչը եղաւ տունին. ամէն ծառա-
յութիւն իրմէ կը սպասուէր. ամուսինը
ունեւոր մը ըլլալով հանդերձ, աններելի չը-
ռայլութիւն մը կը նկատէր տանը մէջ խո-
հարար և սպասուհի ունենալ, որոնց դերը,
ափսոս, հիմա իր փափուկ ու վատոյժ կինը
կը կատարէր: Ու մարդուկը գոհունակ եր-
եւոյթ մը կըստանար տակաւ: Իր կնոջ աճն-
տեսադիտութիւնը, զոր Տիրուհի սորված էր
իր տանտիկին մօրմէն, և որուն սիրուն ու քո-
քէթ կիրարկումը բան մը չէր պակսեցնէր իր
հմայքէն, տեսած գնահատած էր, դրական
գաղափարի տէր ամուսինը, և ո՞վ գիտէ,
գուցէ ասոր համար է որ կնութեան խնդրած
էր Տիրուհին:

Բայց անգամ մը գէթ, իր կնոջ անձնուի-
րութեան փոխարէն անոյ ըստ մը լսուած
չէր բերնէն, ինչ որ շատ աւելի թանկագին
էր Տիրուհիին համար, քան հազար անգամ
կրկնուած ու յաւէտ անգործադրելի խոստումը
արժէքաւոր չէնք մը առնելու կնոջը,
անջատ իր անուան արձանագրուած տանեակ
չէնքերէն: Դուրսէն սակայն որքան զայրոյ-
թով կը անտուէր այս բիրտ վերաբերումը
Տիրուհիին հանդէպ, աստիճան կինը հոն և
նորոգամիտ նայուածքով մը կը նայէր: Ներք-
նապէս չար ոգի մը չէր նկատեր իր ամուսինը
և յանցանքը անոր խառնուածքին, մտքին և
հոգիին կը վերագրէր:

Սկիզբները, կեանքի այս յեղաշրջումը,
որ իր նախատեսածէն շատ աւելի տխուր էր,
սարսափ աղբւած էր Տիրուհիին, բայց սակաւ

հանդարտելով, տառապանքին սաստկու-
թիւնը մեղմացնելու միջոցը կը խորհէր, ոչ
սակայն այն միակ ու կտրուկ միջոցը, զոր
անձկանօք կ'ակնկալէին, զինքը պաշտող
երիտառարդներ և որ իրեն պէս հոն և պար-
կեշտ կնոջ մը համար խայտառակ էր ու ան-
պատիւ: Տիրուհի համակերպութեան մէջ պիտի
դտնար ուրեմն, մեղմացումը վշտին. իր սփո-
փուելու եղանակը հիանալի էր: Ուրիշներուն
սրտապնդիչ խօսքերուն մէջ եղած կարեկից
ու քիչ մըն ալ բողոքախառն շեշտը, զոր չէին
կրնար զսպել, իր վիշտը կը հրահրէր աւելի:
Ու կը խորհէր թէ իրմէ աւելի դժբաղդներ
կան, որոնք ախր կը քաշեն իր կեանքին.
տխուր ու ագեղ պատկերներ կը բերէր աչ-
քին առջև, բաղդատելով իր վիճակը՝ գինով
ախտաւարակ ու անբարոյական մարդոց ըն-
տանեկան վիճակին հետ, ու փառք կուտար,
որ ամո սինը զերծ էր այդ յոռի կողմերէն:

Բայց ամէնէն աւելի, զաւկի մը ծնունդն
էր, զոր Տիրուկ ամուսնութենէն հինգ տարի
վերջը միայն ողջունեց, որ իր ճշարիտ ու
միակ սփոփանքը եղաւ: Քնքոյն աղջիկ մը,
որուն սիրոյն, ժպիտներուն և գգուանքներուն
մէջ կարծես պահ մը կը մոռնար ամէն բան:
Եւ սակայն բաղդը անդարձ կերպով հրաժեշտ
տուած էր իրեն ու իր ճիգերը ա'լ անօգուտ
կը դառնային, վասնզի այսքան մը մխիթա-
րութիւնն ալ շատ տեսաւ Աստուած, այդ
անբաղդ կնոջ, ու կրտսեր զաւկի մը տա-
ռապանքը վերստին եկաւ հարուածել զինքը:

Այսպէս, չի խնդաց, օր չի տեսաւ այս
կինը: Ամուսինը միւս կողմէ, իսպառ չի
փոխեց իր յոռի ճաշակը, կեանքն ու սովո-
րութիւնները, որոնց հատնումով միայն
կը հետեւէր Տիրուհի: Եւ սակայն կ'ապրէր
այդ կինը, կ'ապրէր, քայքայուելով ցաւերու
և հոգերու տուայտանքին մէջ. կ'ապրէր եր-
կար ատեն, զաւկներուն սիրոյն, առանց
որոնց, իր խորտակումը, նոյն իսկ մահը ան-
խուսափելի էր և մօտալուտ:

Ու Դրիգոր աղան էր որ մեռաւ, ամուս-
նութենէն քսանըհինգ տարի վերջը, հիւժե-
լով պոփոնջիլէն որ արմատացած էր իր մէջ,
իր տախիկ նկագրին պէս: Ծուրջիները աղէկ

կողմերը յիշեցին լուսահոգիին. թերութիւնս
ներուն ներեցին ու լացին :

* *

Հիմա, Տիրուհի, քառասունը անցուկ չա-
փահաս կին, իր երկու զաւկներուն սիրովը
առլցուն՝ անոնց բարորութեան վրայ կը խոր-
հէր: Ինք խամրած էր ա՛լ, տառապալից
տարիներու բեռին տակ, ինչպէս ծանօթները
կը գուշակէին, և իր խարխուլ առողջութիւնը
վտանգ կը սպառնար իրօք, եթէ չուայուած
խնամքները, բժիշկներու փութկոտ դարման-
ները և օգուէտ գիւղի մը խողաղիկ կեանքը
չի գային նպաստել իրեն :

Իր զաւակները, Զարուկ ու Պօրթիւնէ,
բարեբաղդաբար իր խնամքներուն և դաս-
տիարակութեանը յանձնուած էին ամուսնոյն
կողմէ, որ իր հաշիւներուն հետն էր միշտ:
Հոգեբուն էն տանելին ու հաճելին էին մի-
անգամայն Տիրուհիին համար, ու անիկա
օգտուելով այս անակնկալ առանձնաշնորհու-
մէն, ինք իր ուզածին պէս կը խնամէր, կը
մեծցնէր զանոնք, գոնէ անոնց վայելել տա-
լու համար կեանքի բոլոր քաղցրութիւնները
որոնցմէ զուրկ մնացած էր ինք կեանքի մեծ
չրջանին մէջ :

Եւ իրօք, անդրաշնիլը՝ Զարուկ, զրկանք-
ներէ զերծ, անվիշտ ու բախտաւոր աղջիկ
մըն էր եղած. վասն զի հայրն ալ առատա-
ձեւն էր իրեն հանդէպ և հաճոյակատար: Կը
թուի թէ զաւկի սէրը միայն զգացած էր ան:
Մօրը պատկերն էր ճիշտ Զարուկ, ու անոր պէս,
պղտիկուց ի վեր նուիրուած ուսման և գե-
ղարուեստի, իր պատանեկութիւնը անցուցած
էր դպրոցներու մէջ, ու ամէնէն վերջը,
լրացուցած էր բարձրագոյն վարժարանի մը
չրջանը երբ հայրը մեռաւ :

Հարուստ, ուսեալ և գեղեցիկ աղջկան
մը ձեռքը խնդրողներ չպիտի պակսէին ան-
շուշտ. բայց պէտք էր լրջօրէն խորհել, խոր-
հըրդածել և աշխուրջ գտնուել, կուրգիկու-
րայն չնետուելու համար անդունդին մէջ,
ինչպէս եղաւ Տիրուհիին: Եւ արդարեւ, խեղա-
ամուսնութիւն մը կնքեց Զարուկ, ու երջա-
նիկ եղաւ :

Բայց անդին կար հէզ կրտսերը Պօրթիւնէ

որ ի բնէ դատապարտուած մտային տկարու-
թեան մը, մանկութենէն ի վեր կ'ապրէր
անհոգ ու անստոյգ կեանքով մը: Մարմնի
առողջ ծլումին հետ, մտային առողջութիւնն
ալ կ'անկնկալէին ծնողքը, որ անխնայ դար-
մաններ կը հասցնէին: Անդուսպ՝ բայց ան-
վասնդ քմահաճոյքներուն կառչած կը մնար
Պօրթիւնէ, թէև միւս կողմէ դատողութիւնն
ու գիտակցութիւնը, երբեմն ստուերի պէս
կուգային կ'անցնէին մտքէն: Դիտէր ատել,
զգալ և սիրել. միւս կողմէ սակայն խոյս
տալ հաճելիէն և օգտակարէն: Թերութիւն-
ներուն հետ առաւելութիւններ, որոնց պատ-
ճառաւ զինքը ճանչցողները կը զգուշանային
տկարամիտէ աւելի բան մը նկատելէ զինքը
ու կը կարեկցէին վրան: Բայց ծնողքին մը-
տահոգութիւնը կ'աւելնար տակաւ, տեսնելով
որ սրագմի ցնցումներ, երբեմն, կուգային
վրդովել Պօրթիւնէին ֆիզիքական առող-
ջութիւնն ալ: Բարեբաղդաբար, ծանր հետեւ-
անքներ չէին ունենար, և դարմանող բժիշկ-
ները այդ ցնցումներուն դիմագրաւող դեղեր
տալով, զգոյ՝ խնամքներ կը յանձնարարէին
միշտ, տեղի չի տալու համար կրկնութիւն-
ներու :

Այսպէս կը դարմանուէր, կ'ապրէր, կը մեծ-
նար Պօրթիւնէ: Հիմա, իր պատանեկութեան
տարիքին մէջ, հարկաւ տղու մը պարզ ու
անվիշտ հոգին չէր կրեր, վասն զի կուգային
վայրկեաններ, որ հառաչանք մը կը թոցնէր
սրտին ու հոգիին խորէն, ամէնուն կարեկ-
ցութիւնը հրաւիրելով իր վրայ: Կը զգա՞ր
արդեօք, այդ գիտակից՝ բայց վաղանցուկ
վայրկեանին թէ դատապարտեալ մըն էր
սրսկ աշխարհի վրայ, զրկուած կեանքի հա-
ճոյքներէն և վայելքներէն, որոնք ո՛վ գիտէ
որքան վարդազոյն կը թուէին իրեն: Խեղճ
աղջիկ :

Կեանքի այս դառնութեան մէջ, Պօր-
թիւնէ, լքեալ մը չէր բարեբաղդաբար, որ-
չափ իրեններէն, նոյնքան գիւղի ծանօթնե-
րէն. չիկար մէկը հոն որ չի ճանչնար զինքը
ու չի կարեկցէր վրան. իրեն յատուկ խօսե-
լու և գործելու եղանակը ունէր զոր ամէնքն
ալ գիտէին ու կուգէին քաղցրութեամբ վե-

բաբերուիլ հետը : Վայրկեան մը չէր բաժնուէր մօրմէն, որ այնչափ կը գուրգուրար վրան . Տիրուհիի շռայլած խնամքներէն դուրս և անոնցմէ աւելի հիւանալի էր լսել անոյշ ուսրտապնդիչ խօսքերը, որոնցմով կը ջանար մեղմացնել դառնութիւնը կեանքին, երբ զաւակը, նորէն անդրադարձած իր գիտակցութեան՝ յորդահոս արցունքներու մէջ, կ'ըսէր .

— Աս ալ ապրի՞լ է, մայրի՛կ :

Ու խեղճ կ'ընէր կ'ըսէր իր բուն յուզումներուն տակ, կը հալէր, կը մաշէր ու չէր գիտէր ի՞նչ ընել կեանքը հաճելի ընծայելու համար՝ տառապող զաւակին : Անոր բոլոր փափաքներուն կը հասնէր ու չէր ուզեր վըշտացնել զանիկա, անվրդով պահելու համար խիղճը, չլսելու, չերեւակայելու համար անոր քանդատները, երբ աւա՛ղ, անոր վիճակէր հեռանալ այս ցաւերու աշխարհէն : Այս սե օրը քանի կը բերէր աչքին առջև, կը խնդենար : Գանի քանի անգամներ Տիրուհի, զաւակը բուժուած տեսնելու տենջանքով, տարած էր զայն աղօթքներով, տունի դեղերով դարմանողներու, ա'լ ձանձրացած սովորական բժիշկներու անօգուտ դեղերէն, որոնցմէ զգուցեալ Ֆօրթիւնէ, Բարբրալդարար սբաղմը հազիւ տարին անգամ մը կը պատահէր հիմա, և ան ալ թեթեւօրէն ու առանց ծանր հետեւանքի, որ մահն է : Շնչասպառ յոգնութիւններէ, յուզումներէ, ստամոքսի ծանրաբեռնումներէ կը զգուշացնէին, որ մի' գուցէ ծանր ցընցում մը գար զգեանել խեղճ աղջիկը : Բարեկամներու խորհուրդին վրայ, էն վերջը, Տիրուհի, զաւակը տարաւ Զօւրիցերիացի բժիշկի մը, որուն տուած դեղերը քիչ շատ բարեօքում մը առաջ կը բերէին, ո'չ սակայն այն կատարեալ ապաքինումը զոր բացի մօրմէն, ոչ ո'ք կը յուսար գտնել այս աշխարհի վրայ :

Ու Ֆօրթիւնէ, ոչխարի համակերպութեամբ մը կը հետեւէր բժիշկներու խորհուրդին :

Բայց անոնց գլխաւոր ու խիստ պատուէրը հանգիստն էր և օտարի մը խնամքը, որպէսզի

աղջիկը չի կարենար իր քմահաճոյքներուն գոհացում գտնալ, ու ձախորդ հաճոյակատարութիւն մը մօրը կողմէն, տեղի չի տար բոլորովին ոչինչի մասնելու այնքան դժուար թեամբ ձեռք բերուած բարեօքումը :

Այս նպատակով ուրեմն, որոշուեցաւ ծանօթ ընտանիքի մը խնամքներուն յանձնել Ֆօրթիւնէն, մօտակայ գիւղ մը . ու մայրը պիտի գար անցընել ձմեռը Զարուկին ու փեսին մօտ, Բերա : Սրտայոյզ եղաւ բաժանումը . Ֆօրթիւնէն չի հաւատաց թէ մայրը, որ վայրկեան մը չէր հեռացած աչքին առջևէն, պիտի բաժնուի իրմէ . մայրը ասդին կը խղճէր իր արցունքները, առանձին մնալուն պոռթկալու համար, վասնզի Ֆօրթիւնէն, ամէն անգամ որ մօրը լացը տեսնէր՝ ինքն ալ աղի արցունքներ կը թափէր . տաք համբոյրներ քաղելով զաւակէն, Տիրուհի փաղաքուշ խօսքերով սրտապնդեց զայն . իր յուզումին տակ ընկճուած, քանիցս աղաչեց, թախանձեց խնամակալներուն, որպէս զի աղէկ խնամեն զաւակը :

Կասկածներէն, յուզումէն, հոգեհատորին զրկանքէն, որուն չափ ոչինչ դառն եղած է իրեն համար, Տիրուհի խռովեալ գիշեր մը անցուց . զաւակին հետն էր մինչև առտու : Անմխիթար կնոջ մը երեւոյթով, սեւերու մէջ փաթթուած նստաւ միայնակ, մութին մէջ, ու ամբողջ գիշերը լացաւ հէգ կիներ . աղերսեց Աստուծոյ որ ղթայ իր անմեղ դառնուկին վրայ ու պատրաստէ անոր համար ալ անվիշտ ու երջանիկ կեանք մը, ինչպէս պարզեալ էր Զարուկին : Իր պատուէրին համաձայն խնամակալները շարունակ լուր կը զրկէին Ֆօրթիւնէին վրայ, աղուոր և յուսադրիչ տեղեկութիւններ, որ կեանք կուտային Տիրուհիին : Ու չէր գիտէր ինչպէ՛ս իր երախտագիտութիւնը յայտնել Տօքթօրին, ամէն անգամ որ կ'ըրթար առնել զաւակը այցելելու համար անոր :

— Ինչպէ՞ս, Տիկին, աղքեցութիւնը կը տեսնա՞ք կ'որ դեղերուն . դո՞հ էք տարուած խնամքներէն :

Տիրուհի կը յորդէր իր չնորհալալու զգացումները ու կը մեկնէին գոհունակ :

Աղջիկէն բաժնու հղուն, ա'լ առջի սաս տիկ յուզումները չէր ունենար մայրը. կը խորհէր թէ ամառը գալուն, օգտփոխութիւնը ամէնքը միասին կընէին և ա'լ անկից վերջը հարկ չէր մնար ուրիշին քով, աչքէ հեռու ձգելու իր սիրականը: Փօրթիւնէ, դեռ հաղիւ տասնըվեցը ընդգրկած, սիրելով գիւղը, գիւղի կեանքն ու տնեցիները, ուրախ կեանք մը կ'անցընէր, այցելելով դրացիներուն, պտրտելով ասդին անդին, թիթեռնիկի մը անհանգարտութեամբ, մինչև որ յոգնած դառնար տուն, դարմաններ ստանալու խնամակարներէն:

Բարեկենդանին մօտերը, մայրը որ ուրիշ հոգ ու մտածում չունէր, բայց միայն արագ ասպաքինումը իր զաւակին, անգամ մըն ալ ուղեց տանիլ զայն բժիշկին և հրճուիլ՝ լսելով անոր յուսադրիչ և սփոփարար խօսքերը.

—Շ, Տիկին, ըսաւ Տօքթօրը, շատ աղէկ կը գտնամ, շատ լաւ հոգ կը տանիք. միեւնոյն պատուէրներս ու դեղերուն շարունակութիւնը:

Այս անգամ Տիրուհի, չը թողնուի որ զգացած խելայեղ ուրախութիւնը մթազնի բաժանման և կարօտի յուզումով, ուղեց միասին տանիլ Փօրթիւնէն Բերա, հոն անցընելու համար Բարեկենդանի զուարթ օրերը: Տունը համակ ուրախութիւն այդ օրը. դրացի բարեկամներ կուգան խնդակցիլ:

* *

Տարօրինակ բան. չուրջը տխրառիթ բան մը չըլլալուն հակառակ, Չարուկ այդ օրը ամբողջ մեկամաղձոտ երեւոյթ մը առած էր: Դուրսի եռուղեւը, Բարեկենդանի անսովոր ոգեւորութիւնը, որուն ի տես ամէնէն տըխուր մտածումները պիտի ցրուէին տակաւ, ո' և է աղբակցութիւն չէին ընել Չարուկին վրայ. լուռ էր ու մտահոգ. ու չէր ուզեր սիրտը մէկու մը բանալ սփոփուելու համար:

Դիչերը աղնիւ այցելուներ առանձին չի թողուցին զիրենք, կարծելով ա'լ աւելի ուրախ տեսնել բոլոր տնեցիները: Իրօք ուրախ էին ամէնքն ալ. բայց Չարուկ դեռ չէ սթափած իր տրտում վիճակէն. կռնակը տուած դաշնակին, չուղեր երեսը նայիլ ան-

դամ, մինչդեռ այդօրինակ հաւաքոյթներու միջոցին հաճոյքով ունկնդրել կուտար թըրթռուն եղանակներ:

Ասդին Փօրթիւնէ իր կարօտացած սիրականներուն մօտիկը գտնուելուն՝ ուրախ, իրեններուն և հիւրերուն հետ կը խօսէր, կը կատակարանէր, կը դուարձանար, բայց քոյրը, սրտնեղութեանը պատճառաւ զայրանալուն՝

—Ես հիւր եմ, կ'ըսէր, լեցուած աչքերով:

Եւ հիւրերը չի մեկնած, Փօրթիւնէ ելաւ ննջասենեակը հանգստանալու:

Այցելուներու զբաղեալ մէկ միջոցին, ասդին Չարուկ կը խզէր իր լուութիւնը, բաներ մը ըսելով ամուսնոյն, որ շատ հետաքրքիր կ'երեւէր հասկնալու համար պատճառը այդ երկարատեւ ու անտեղի մտատանջութեան: Տարտամ ու տխուր ենթադրութեանց մոլորանքի մը մատնուել էր Չարուկ, ու գէշ տրամադրութիւն մ'ունէր այդ օրը:

—Կարծես, ըսաւ, ահաւոր դժբաղդութեան մը կը պատրաստուիմ:

Մնայլ խորհուրդ, զոր ցրուել անհետացնելու համար զուարթ խօսքերը չէին զօրեր, և ատոր համար Տիրուհի խնդրեց որ բան մը նուագէ:

—Իմ ամէնէն ուրախ օրս է, աղջիկս, ըսաւ, տե'ս Աստուած կը լսէ կոր աղերսս:

Չարուկ չուղեց մերժել մայրը, դարձադաշնակին, ահնարկ մը նետեց դիզուած նօթերուն վրայ և ընտրեց կտոր մը զոր ներկանքը խորին ու երկիւղած լուութեամբ մը կը պատրաստուէին ունկնդրել:

Փոքորիկն էր ան Ուէպէրին, սարսուղդեցիկ ու տխուր եղանակ մը որ այնքան կը պատշաճէր Չարուկի մտածումներուն և որ կարծես մահանուագի մը տպաւորութիւնը ներգործեց բոլոր ունկնդիրներուն վրայ:

Ու մինչ վարը, Չարուկ կը գոռացնէր դաշնակը, այնքան բնականօրէն պատկերացնելով «փոթորիկ»ը, սպառնալիքներու և որոտումներու ահաւոր ու սարսափելի երանգներովը, վերը Փօրթիւնէ սըազմի ահռելի տանջանքներու և զալարումներու մէջ, այս անգամ վերջ կուտար կեանքի փոթորիկին:

ՄԻՀՐԱՆ ԴԱԻԹԵԱՆ

Բերա

ՈՒՐՈՒԱԳԻԾՆԵՐ

(ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ)

Շ. ՇԱԼԱՐՅԵ

Իր իսկական անունովը Միքիաս Արապեան ու գրականութեան մէջ Շ. Շալարչ, Պոլսական ամուսնութիւններու հեղինակը հազիւ քսանընէնք տարեկան երիտասարդ մըն է որ վաճառականութեամբ կը ղրաղի Մանչեսթըրի մէջ և թերևս ասոր համար է որ այնքան ձեռնհասօրէն նկարագրած էր մանիֆաթուրայի վաճառականին տիպարը՝ իր վերջին վէպին մէջ։ Բանի մը տարին մէկ անգամ Պոլիս՝ իր ծննդավայրը կուգայ, ծնողքը տեսնելու և օգտօնութեան համար, տարին մէկ—երկու անգամ ալ ժամանակ կը գտնէ գրական էջեր ղրկելու Պոլսոյ այս կամ այն թերթին։

Հակառակ իր նախորդ հեղինակութիւններուն, նորավէպեր մեծ մասամբ, որոնք զուտ գրական ու բանաստեղծական գրութեան ենք էին, իր վերջին վէպը՝ «Սարգիս աղային նշանաւորը»-ը իրապաշտ հով մը ունէր և աւելի բարձրու պատկերացում մըն էր ընտանեկան կեանքի ու գործի աշխարհի, ճարտարօրէն զուգորդուած, որ անսովոր հետաքրքրութեամբ մը կարդացուցաւ։

Ֆիզիգապէս սիրուն երիտասարդ մը, թարմ դէմքով, վառվռուն աչքերով ու նրբահասակ, միշտ վայելչապէս հագուած, որ այնչափ զուարթութեամբ ու նրբամտութեամբ խօսիլ գիտէ՝ ինչպէս կը գրէ։ Առաջին տեսակցութեամբ, անգլիական կրթութիւն առած անձի մը տպաւորութիւնը կը թողու վրադ, ինչպէս որ է իսկապէս, առանց սակայն օտարամոլ հակումներու և բռնացրօսիկ սեթեւեթի։ Ընդհակառակը, նոյնքան անկեղծ է որքան համարձակ և մեր օրուան գրականութեան վրայ կը յայտնէ կարծիքներ որոնց մէջ համակրանքն ու հակակրանքը, գնահատումն ու քննադատութիւնը յստակօրէն կը ճշգրտին, առանց որ և

է չափազանցութեան ու մանաւանդ առանց յաւակնութեան։ Վասն զի, հակառակ իր դեռ չա՛տ երիտասարդ հասակին ու տպագիր քիչ բան արտադրած ըլլալուն, Շ. Շալարչ գրագէտ մըն է «մինչև եղունգներուն ծայրը» — ինչպէս պիտի ըսուէր ֆրանսերէն, — և խղճմտօրէն հետեւած է Եւրոպայի գրական շարժումին, իր գանաղան շրջաններուն մէջ ու իր բազմատեսակ երեւոյթներովը, «գըպրոց»ներովը, ուղղութիւններովը։

Համակրելի՝ բառին ոչ — հասարակ դարձած գործածութեամբը, Տօքթ. Ալեքսանդր պէյ Արապեանի որդին կը պատկանի այն երիտասարդ գրագէտ — վաճառականներու դասին որոնց անդրանիկները եղան մեր մէջ Գառնիկ Ֆնտզեան ու Տիգրան Կամսարական, թէև այժմ երկուքն ալ հեռացած գրական ասպարէզէն, և որոնց թիւը որչափ աւելի ասուարանայ՝ այնքան աւելի գեղեցիկ ու ինքնայատուկ երեւոյթ մը առաջ պիտի գայ, նիւթական որեւէ նկատումէ անկասօրէն գրող amateurներու աշխատակցութեամբ, ինչպէս ունինք արդէն մեր շուրջը գրագէտ — փաստաբան, բանասէր — բժիշկ, առեւտրական ու սեղանաւորական տանց պաշտօնեայ և այլն։

«Շ. Շալարչ» կամ Մ. Արապեան, իր առեւտրական գործունէութենէն դուրս, նկատուելով իրրեւ աշխարհի՛ երիտասարդ ու իրրեւ նրբամիտ գրագէտ, — յատկութիւններ որոնք այնքան ներդաշնակօրէն կը զուգորդուին, — նոր սիրունդի զրական մշակներուն մէջ առաջին կարգին վրայ կը գլուխուի արդէն, և իրեն համար մաղթելի միակ բանն է որ այսքան հազուադէպ զարձնէ իր երեւումը մեր գրական — լրագրական հրապարակին վրայ։

ԳԱՄԷՐ

Մասիսի յաջորդ թիւով պիտի հրատարակենք ԳՐԱԽՈՍԱԿԱՆ մը՝ մեր ներհուն աշխատակից ՏԻԳՐԱՆ ԵԼՔԷՆՃԵԱՆէ։

ԱՆԿԱՅԵԼՆԵՐ



ՕՐ. Ե. Է. ԻՆ

Բոլոր սիրած ծաղիկներէդ երփնազանճ,
Ծիրկաթին մը պիտի շինեմ շողարձակ,
Ու ԲՈՒ գլխուդ շուրջը պիտի կապեմ զայն,
Շուշաններուն կոռուններովը բարակ:

Ժանեկազարդ ու վերէն վար թափանցեց,
Ամդան մըն ալ կ'ուզեմ քեզի հագցընել,
Սքերներուն կապոյտին մէջ թաթխուած,
Մեհաբաճիկս երկզնեով ոսկեթել:

Կ'ուզեմ միայն... Ի՛նչ ընեմ որ չեմ կրնար
Միտքս անցած բոլոր մաքուր բաներուն
Տերն ընել քեզ: Տայգերներու սիրահար՝
Դիւթուքի՛ւնն ես, մրբուքի՛ւնն ես աչքիս դուն:

Սակայն նե՜ե՛ երբ չեմ կրնար յաջողիլ.
Կը բաւե որ քեզ կը յիշեմ միշտ գոնէ:
Միակ իղձըս, թաղծուքիւնս դեռածիլ
Քեզ ուզածիս պէս չկրնալ սիրելիս է:

ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ԲԱՐԵՇՐ.ԶՈՒՄ ԵՒ ՆՈՐ ԳՐՈՂԸ

ՄՈՒՇԵՆ ԿԱՐԴԱՊԵՏԻՆ

Կարեւոր է նախապէս՝ նկատի առնել սա պարագան թէ՛ մեր գրականութեան է՛ն կրօնական հանգամանքով ներկայացուած ատենն իսկ, գոյութիւն ունեցած է գրականութիւնը աշուղներու, Քուչակներու գրականութիւնը, զարմանալիօրէն յատկանշական կարկառունութեամբ մը սիրային:

Կրօնական ու սիրային, — մեր գրականութեան է՛ն տիրող տարրերը, — իրենց աստիճանական ընթացքին մէջ, հետզհետէ հասունցող, զարգացող հայ անհատին մէջ հասած են այնօր բարձունքի մը որ յուսադրիչ է իրա՛ւ որ:

Սիրային տարրը՝ մեր ցեղին մէկ մասը կազմած՝ այսօրուան նորերուն մէջ կ'արտայայտուի բանաստեղծական խօս ու հարուստ, երանգոտ արտադրութեան մը մէջ որ արժանի է հոգեբանական խորունկ ուսումնասիրութեան: Եթէ անիկա տկար է, եթէ անիկա գիտակից չէ տակաւին, եթէ սէրը՝ այդ արտադրութիւններուն մէջ կը ներկայանայ իբր խենթ յուզում մը, բուն ինքնախաբէութիւն մը, պատճառ մը չէ՛ զայն արհամարհելու նոր գրողին մէջ, բան մը որ դժբաղդաբար կ'ընեն մեր միւս նոր գրողները ու հինի հովեր կ'առնեն:

Սիրայինին մեր արտադրութիւններուն

մէջ, այնքան ճոխ, այնքան յաճախ յայտնուելը բնական է և չէ թէ մեր ցեղին համար ակտաբանական նշան մը: Բայց դիտելու պարագան սա՛ է թէ՛ այդ սէրը չէ՛ այն՝ որ աշուղին քնարը ու անոր կուրծքէն փստած նուագարանին շեշտը արտայայտեցին. մեր մէջ նոր գրողը որ նոր ալ սիրահար մըն է, աւելի լուրջ, աւելի գիտակից սէրեր ունի: Միջավայրն ու արդի ընկերութիւնը կարգ մը ուրիշ ազդեցութիւններու հետ, ներգործած են նաև ուրիշ նրբացնող ազդեցութիւն մը, մարդուն ու բնութեան գեղեցկութիւնները տուած են նոր գրողին առարկայական զգացողութիւններ և գրողին բնականէն օժտուած հոգին, զգայուն սիրտը անոնց ներշնչման տակ ենթարկուած են ենթակայական զգացողութիւններու, իր բնութեան մէջ յօրինելով բանաստեղծական նոր մարդը: Սէրը այն չէ նոր գրողին համար, ինչ որ էր Բուլակի մը, ինչքան ալ Բուլակի մը հանձարը երբեմն տողած ըլլայ սէրը՝ Շէքսպիրեան ներշնչման հաւասարող հոգեկան ներշնչումով մը:

Նոր գրողին կեանքը՝ ինչքան շատ չփում ունեցած է միջավայրին հետ այնքան աւելի տեւական եղած են իր գրածներն ալ, այնքան աւելի այլազան իր փորձառութիւնները: Ու երբ նոր գրողը՝ երիտասարդ մը՝ հրապարակ կը նետուի արտագրելու, մղուած իր հոգիին ուժէն, թարմ կորովով առլի, ու բազմազան յարաբերութիւններու մէջ, միջավայրի՝ հետ հիներուն ունեցածէն շատ աւելի իր չփումներուն մէջ կանխահաս մտքի մը շնորհներով օժտուած, ինչո՞ւ յարձակիլ վրան, ինչո՞ւ արհամարհել անոր տաղանդը:

Ոչ ոք իրաւունք ունի նոր գրողին վրայ այդ յարձակումն ընելու, եթէ յայտնի համարձակ վիժած մը չէ ան՝ գրականութեան մէջ լոկ անունի հետամուտ:

* *

Մեր կրօնական գրականութիւնը այնքան ցցուն բարեշրջում մը չէ ունեցած ինչքան սիրայինը: Վերջերս միայն մէկ երկու գրագէտ—բանաստեղծներ ուղեցին կրօնական բանաստեղծութեան խառնել վսեմ ու բարձր խորհուրդ և փիլիսոփայութիւն մը որ առողջ

էր և հեռի ծթած պատուելիականութիւններ պարունակէ:

Զօրաւոր, հզօր բարեշրջումը զոր մեր գրականութիւնը պիտի կրէ, նոր գրողներու միջոցով, հոս ալ միացած հիներէն ժառանգուած լուրջ ու յարատեղող ոգիի մը, պիտի արտադրէ բարեշրջուած գրականութիւնը:

Գրական ժառանգականութիւնը ու միջավայրի ազդեցութիւնը երկու մեծ ազդակներն են այդ փոփոխութիւնը առաջ բերելու համար: Գրագէտը լո՛կ ընթերցումով և ուսումնասիրութիւններով չի շինուիր, գրական ընթերցումները մարդը հետեւող մը կը դարձնեն, չափ հեղ զուրկ՝ ինքնատպութենէ, բնականութենէ:

Կը խորհինք որ լաւագոյն է մեզի համար ստեղծել մեզի յատուկ գրականութիւն մը, թարմ, նոր, զմայլելիօրէն գեղեցիկ ու բարձրացուցիչ: Մեր կեանքը իր բազմազան ու սիրուն փուլերուն մէջ, չկրնար պատկերացուիլ փոխ առնուած, ճշմօրէն գրականութիւններով զոր հետեւողութեամբ կազմուած գրական հայլին չի կրնար ցոլացնել: Ինչ որ մեր ցեղին լաւագոյն տիպարները կտակեցին մեզի իբր իրենց գրական բերրի ձգտումներն ու յատկանիշները, պահենք զանոնք: Զաւակը բարեշրջման օրէնքով աւելի կատարեալգործուած կ'ըլլայ, աւելի՛ բան մը կուենայ իր ծնողքէն. նոր գրողը աւելի բան մ'ունի հինէն, բայց իր արժանիքը՝ չկայանար այնքան՝ ունեցած ըլլալուն ինչքան այդ ունեցածը անարատ պահելուն ու զայն ի հարկին գործածելուն մէջ:

* *

Միջավայրի ազդեցութիւնը երկրորդ գլխաւոր ազդակն է որ գրական այդ բարեշրջումը ընելու պիտի նպաստէ: Մեր համայնքը ստացած է մտաւորական յատկանիշներ, անանկ աղուոր տարրեր մը որ այսօր ատակ է արտադրելու նոր գրականութիւն մը, եթէ իրեն տրուի աղուոր ուղղութիւն մը:

Մայրաքաղաքի գրողը այդ նոր բարեշրջումին համար կրնայ բերել նրբացած, բանաստեղծական սէրը որ միջավայրին պատուաւոր ու օրինակելի ընկերութեան մէջ

տիրող կիրքն է։ Մայրաքաղաքի գրողը թո՛ղ տայ այդ գրականութեան Սթուըրթ Միլի մը, Սթենսլըրի մը, Բարլայլի մը իմաստասիրութիւնները, Թէնի մը քննադատութեան ոգին ու, ամէն ինչ որ արուեստ եւ ուսումնասիրութիւնը իրեն կրնան հայթայթել աւելի դիրքութեամբ քան դաւառի գրողին։ Ու թո՛ղ անճաշակօրէն չփորձէ նկարագրել գաւառի կեանքը զոր չէ տեսած ու ապրած։ Ու գաւառի գրողն ալ թո՛ղ բերէ իր պարզութիւնը, քնականութիւնը, ներդաշնակութիւնը, նկարունութիւնը։

Բանաստեղծ Վանեցին՝ բնականէն ներշնչում ունի. սորվեցուր սա՛ մեր բեռնակրին կարգալ գրել, ու յաջորդ օրը քեզի ոտանաւոր կը գրէ։ Առակախօս Ալեկեյն որուն հանճարը իմաստուն խօսքերով ու բերանը զուարթ ու խոհուն երգերով կը խրթոյն նուրը ու աշխիւ հոգի եւդոկիացին, խորհող Սվազին, գրագէտ Սարրերդըին մեղի կրնան բերել իրենց բնական արտադրութիւնները ու ահա նոր գրականութիւնը, լիովին տո՛մային ու յատկանշական, իր շնորհալի հասակը կը ցուցնէ մեր մէջ։

Ու մինչ արդէն իսկ պատրաստուած գրողներ իրենց նիւթերը կը բերեն, գրական նոր սերունդ մը կը մարդուի բնութեան աւելի մօտ, աւելի ստեղծող, անկաշկանդ մտքով արտադրող։ Որովհետեւ ինչքան ատեն որ մեր ուսանողները կը գտնուին փողոցներուն եւ ու աղտոտ շրջանակին մէջ, պատուելի դասատուներու դանտկոծութեան տակ, շատ աւելի անբարոյական ու անպարկեշտ քան ամերիկեան հաստատութեան մը մէջ զըտնողներն, ինչքան ատեն որ անոնք զուրկ կը մնան բացօթեայ խաղերէ, պոռոյտներէ, մարզանքէ, այնքան շատ պիտի ունենանք ճշմամբ իմացականութիւններ, գէշ գրողներ, հիւանդ անհատականութիւններ։

Յանցանքը ուրեմն բոլորովին չի ծանրանար նոր գրողներուն վրայ՝ եթէ անոնք առողջ մտքով չեն մեծնար, ու հիւանդ կապրին կը գրեն։

ԵՐՈՒԱՆԴ ՄԷՍԻԱԵԱՆ

ԽՄԱՌԱԳՐԱԿԱՆ ԾՅՈՒՆԵՐ

Կայս. Գնահատում. — Վսեմ. Արիկ էֆ. Ունճեան, որուն շնորհուեցաւ Ա. կարգի Օսմանիէ պատուանշան, Կայսերական այս բարձր գնահատման արժանանալուն առթիւ խնդակցական ու շնորհաւորական արտայայտութիւններ ընդունեց ինչպէս իր բարեկամներուն ու ծանօթներուն նոյնպէս օրաթերթերուն կողմէ որոնց կը ձայնակցի Մասիսի իմբագրութիւնն ալ։

Ս. Հայրապետը ապրիլի վերջերը Էջմիածնէն Երեւան դացեր է ուր քանի մը օր մնալէ ետք՝ Վանք վերադարձեր է։ Ն. Ս. Օծութիւնը այս կարճ ճամբորդութիւնը ձիով կատարած ըլլալով, օդերուն բարեօքման հետ իր առողջութեան ալ բաւական կազդուած ըլլալն ակներեւ է։

Իզմիթի նորակազմ Գաւառ. Ժողովը հետեւեալ կերպով կազմեր է իր դիւանը. Ղուկաս էֆ. Եսայեան՝ Ա. ատենապետ, Երուանդ էֆ. Սորասան՝ Բ. ատենապետ, Վահան էֆ. Պարտիզպանեան՝ Ա. ատենադպիր, Յակոբ էֆ. Հարենց՝ Բ. ատենադպիր։

Պարսկական ընդհ. հիւպատոսը՝ ընկերակցութեամբ Գրիգոր Սան Շամտանճեանի շարթուս մէջ Պատրիարքարան երթալով ամուսնական խնդրի մը առթիւ տեսակցութիւն մը ունեցաւ Ս. Պատրիարքին հետ։

Սալիսէի աստիճան շնորհուեցաւ Ղալաթիոյ Օսմ. Նամակատան ժամամանց ճիւղին տեսուչ Բարունակ էֆ. ի, որ վաղեմի ու պարտաճանաչ պաշտօնատար մըն է։

Կիլիկիոյ թեմերէն Կիւրիէի կաթողիկ. տեղապահ Տ. Արրահամ եպիսկ. Մամիկոնեան իր պաշտօնատեղին ուղեւորեցաւ։

Օրբագիւղի երկսեռ վարժարաններուն ի նպաստ կազմակերպուած Նուազահանդէսը տեղի պիտի ունենայ վաղը՝ կիրակի ցորեկ, Թէփէ — Պաշլի թաղապետական թատրոնին մէջ, հայ և օտարազգի երկսեռ արուեստագէտներու և արուեստասէրներու լաւագոյն խումբի մը մասնակցութեամբ։ Տոմսակները գրեթէ սպառած են արդէն, ինչ որ կ'ապա-

ցուցանէ այն համակիր ընդունելութիւնը զոր հանրութիւնը և մասնաւորապէս Որթագեղցիները ըրած են իրենց ուղղութեամբ հրաւերին :

ՏԻՐՈՒՆԻ

Գարակէօղեան ընտանեաց պետին՝ Գրիգոր Էֆ. ի քոյրը, Տիկին Նեկտար Գարակէօղեան, — մայր Յովհաննէս Էֆ. Գարակէօղեանի, — որ կարճատեւ հիւանդութենէ մը ետք մեռաւ նախորդ չարթուն, բարի և առաքինազարդ կնոջ մը անունը կը թողու, սիրուած և յարգուած բոլոր զինքը ճանչցողներէն : Յուղարկաւորութեան հանդէսը կատարուեցաւ շաբաթ առաւօտ Բերայի Ս. Նրորդութիւն եկեղեցին, ուր համախմբուած էր յուղարկաւորներու ստուար բաղմութիւն մը՝ մեծ մասով կաղմուած պետական պաշտօնատարներէ, սեղանաւորական ու առեւտրական դասի ներկայացուցիչներէ, Պատրիարքարանի ժողովականներէ, փաստաբաններէ, բժիշկներէ և այլն, ինչպէս նաև Հայ Հռոմէական երեսելիներէ ու պատուաւոր օտարազգիներէ : Եկեղեցական դասին գլուխը կը դանուէին Տ. Բարթուղիմէոս և Տ. Գրիգորիս արքեպիսկոսները, և Տ. Հմայեակ ու Տ. Դէորդ եպիսկոպոսները, շրջապատուած բաղմութիւն վարդապետներէ ու քահանաներէ :

Դագաղը ծածկուած էր մանիշակազարդ խաչերով ու պսակներով զորս նուիրած էին հանգուցելոյն եղբայրը, դաւկըները, ինչպէս նաև Պէօյիւքտէրէի Թաղ. Խորհուրդը ու Խասգիւղի դպրաց դասը : Արարողութեանց աւարտումէն ետքը, դագաղը հանդիսաւոր թափօրով հանուեցաւ եկեղեցւոյ բակը ուր ներկաներն իրենց ցաւակցութիւնները յայտնեցին հանգուցելոյն սգակիր որդւոյն՝ Յովհաննէս Էֆ. Գարակէօղեանի, և Նդուարդ, Թագւոր, Արշակ Էֆ. ներուն ու Գարակէօղեան ընտանեաց ներկայ անդամներուն, ինչպէս նաև փեսին՝ Նշան Էֆ. Կեսարեանի : Գրիգոր Էֆ. Գարակէօղեան չէր կրցած դալ, անձնական տկարութեան պատճառաւ :

Դագաղը մեռելակիր կառքով փոխադրուեցաւ Շիրիի աղբ. գերեզմանատունը

ուր հանգուցեալ Տիկնոջ մարմինը՝ ամփոփուեցաւ Գարակէօղեանց ընտանեկան դամբարանը, ցաւակցական արայայտութեանց մէջ տեղ :

Հանգուցեալ Կարապետ Էֆ. Տէրունեան, որ իր մահկանցուն կնքած էր Պրիւսէի մէջ՝ ուր բաւական տարիէ ի վեր հաստատուած էր սեղանաւորական գործերով, ծանօթ դէմք մըն էր Պոլսոյ մէջ որու առեւտրական հրապարակին վրայ գործունէութեան և ուղղամտութեան համբաւ կը վայելէր, ու իբր երէց եղբայր՝ մեծ սատար եղած էր Տէրունեան Տեարց յառաջդիմութեան :

Յուղարկաւորութեան հանդէսին առթիւ որ կատարուեցաւ երեքշաբթի առաւօտ Բերայի Ս. Նրորդութիւն եկեղեցին, հանգուցելոյն ինչպէս նաև Տէրունեան ընտանեաց բարեկամներու ստուար եւ ընտրեալ բաղմութիւն մը համախմբուած էր որոնք արարողութեանց աւարտելէն ետք, իրենց ցաւակցութիւններն յայտնեցին սգակիր եղբորը Օննիկ Էֆ. Տէրունեանի և պարագաներուն : Թաղումը կատարուեցաւ Շիրիի աղբ. գերեզմանատունը, ընտանեկան դամբարանին մէջ :

Եւրոպայի մէջ պատրաստուած մեծարժէք դագաղը, որով հանգուցելոյն մարմինը փոխադրուած էր Կ. Պոլիս, Տէրունեան ընտանիքին կողմէ նուիրուեցաւ Բերայի եկեղեցիին :

ՏՈՒՔԹ. Ա. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

ՌԱՐԻՋԻ ՀԱՄԱՆԱՍՏԱՐԱՆԷՆ

Կը դարմանէ տղայոց հիւնդուքիւններ (ներքին հիւանդութիւններ և վիրաբուժութիւն), կը կատարէ քթի, ակաջի և կոկորդի գործողութիւններ :

Երեքշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ Բերա, Մեծ—փողոց Քրէտի Լիոնէի քով, թիւ 331 :

Երկուշաբթի և հինգշաբթի Գատը գիւղ, Տուվար Տիպի, թիւ 12 :

Արսօմաք Կ. Ս. Իթիօիճեան

Տպագրութիւն ԱՐՄԵՆԻԱՅ Օրագրի

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎՈՐԱԿԱՆ ԸՆԿ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Յ Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրեցոյ կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գինեւով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրողը ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսալարութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրքեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրորուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ
Թուրքիոյ եւ Արեւելի ՏՅՈՐԷՆՈՒՅԻՆ

Պոլիս, Սուլթան Համալ, Բաւաթ Բաքքըն Ծղու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Լիւայէթ Խան: Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԼԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵԼՐՈՒՆԻ)

ԱՍՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուղաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեսպանատան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զբոսանքի աքաղաղման

Պալապիւսան ամէն օր ակոյայի ամէն տե. ոակ հիւանդութիւններով տառապողներ, կ'ընդունի. իսկ Ուրբաթ, կիրակի եւ Ներք շաբթի մինչև ժամը 5: Գիշերուածն օր եւ է ժամուն կարելի է դիմել: Պալապիւսան կ'ե. րաշխաւորէ իր լեցուցած ու չինած ակոյաները: Յորեկները ակոյայ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կախեալ է:

Աղօտաներուն ձրի

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տե. սակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ դաւազաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապառիկ զԵՆՈՂՆԵՐԷՆ՝ 100ին 15 զեղչով:



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուլադիմիր արտոնում

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄ- ՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՒԿԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՒԿԵՆԱՌՈՎ ՈՒՂԵՒՈ- ԲՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿԹ- ԻՐԱԵՐՈՆ ԴԷՄ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած 10,666,667 Փրանք

Երաշխաւորութեան դումար աւելի քան 137,300,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա- 282,000,000 »
դուխ եւ վնասուց հատուցում

1902 տարւոյ մէջ դանձուած ապահովագրի եւ տուոս 54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց ամար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա,

ՅԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻԹՅՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օժիշի, արկածի, ցման բուսկի հիւղեր

VICTORIA ՎԻԹՅՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԿԵԱՆՔԻ ապահովագրութիւններ ունի թէ՛
DE բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան
BERLIN Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ
ընդ վճարումները շաբաթական մասնավճարներով տեղի կուենան,
սկսեալ 5 շաբաթէն

Ապահովագրեալ գումար 1902ին Ֆր. 1,244,457,577

Պահեստի դրամ 1902ին » 451,284,214

Հաստատուած 1853 սեպտ. 2-ին ար- ՀԵԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ
բայական հրովարտակով եւ ուղղակի Օսմ. Կայս Պանքա
կառավարութեան հսկողութեան ներ- եւ Քրէտի Լիոնէ
քէ:

Ի իսկոր Ընդհ. Ներկայացուցիչ
ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՅԱՅԵԱՆ

Տեսուչ
ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԷՉԷՃԵԱՆ

Պոլիս Քաթրեմբողլու խան
թիւ 45 եւ 45 Ե.

ՏՕՔԹ. Ժ. ԿԱԼԵՊ

Մասնագէտ միզանցքային հիւանդու-
թեանց: Վկայեալ Վիէննայի բժշկական Հա-
մալսարանէն եւ Բարիզի ու Պէրլինի հիւան-
դանոցներուն մէջ գործնական փորձեր կա-
տարած, կը դարձնէ իրեն դիմող հիւանդ-
ները՝ գիտական նորագոյն մէթոտներու հա-
մաձայն: Հասցէ՝ Բերա, Թիւնէլի Բասաժին
դէմ, Նէմէրիճի փողոց, Թ. 31:

8-12

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐՍ. ՄԵԾ՝ ԳՈՂՈՅ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դ'մ

ԳԵ. ՆԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-

խէն մինչեւ իրիկուան Ժ. 11 1/2

ԲԵ. ԳԵ. Ուր. օրերը 6 Են մինչեւ 11 1/2

Նիքոսիի օրերը ժամայրութեամբ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի
մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքե-
նայ մը սւնենայ, որովհետեւ լաւ մեքենայ
մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մա-
տուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը ան-
վերջ դժգոհութեանց եւ տաղաւկի աղբիւր մըն է:
Բոլոր աշխարհ դիտէ թէ՝

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին:

ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճա-
րատանց մէջ՝

ԲԵՐՍ.

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱՏԱՆ.

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՒՏԱՐ

Չարչը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կանաւեալ երաւիաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց,
Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

ԳՐԱԴԱՐԱՆԱՐԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԳԵԾԱՅԻՆ
ՄԱՍՆԱԳԵԾԱՅԻՆ

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՋԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիճէնս)

ՊԱՏՈՒՍ. Ա.Լ. ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԻՔՍ ԼՈՒԻ ՏԵ ՊԱ ՎԻԷՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. բնդդեմ հրդեհի եւ ծովային արկածներու (ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս, Քոնսթ Լիօնէ
Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Ֆ. ՅԵՐԱՍՅԱՆ

Դրասնենայ, Պոլիս, Հանթուլօ խան, Թ. 52—53—54—55—56

ՕԹԷԼ ՏԷՕՌՕԲ

(ՊՈՒՍՍ.—ՉԷԲԻՐԿԷ)

Այս վաղածանօթ հաստատութիւնը որ
Պրուսայի բարձրագոյն ու գեղազուարճ մէկ
կողին վրայ կը գտնուի, ջերմուկներուն
մօտ, իր բոլոր յաճախորդները գոհ ձգելու
պայմաններով օժտուած է: Նշխանակներէ.
րուն ու կահ կարասիներուն մաքրութիւնը,
որոնք ընտանեկան յարկի մը հանգամանքը
կուտան անօր, սպասարկութեան կանոնա-
ւորութիւնը եւ առատ ու ընտիր ճաշերը
գերազանցապէս յանձնարարելի դարձուցած
են «Կրանտ Օթէլ ա'ի Եօօր» պանդոկը որ,
հերկայ եղանակին մէջ մանաւանդ ամէն
հանգստաւէտութիւն կընծայէ Զերմուկները
գացողներուն, դիւրամտալելի պայմաններով:

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Դնեցէք Կ. ՆԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ.
ԳՈՒԼԵԱՆԻ Չինաստանէն, Հնդկաստանէն,
Ճաւայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած
բարձր, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն,
որոնք ամրան եղանակին յարմարագոյն ըմ-
պելին են:

Միշտ ուշադրութիւն մեր
վաճառանիշին:

Կ. Պոլիս, Պահճէ Դափու,
ձէլալ պէյ խան, Թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ
գլխաւոր քաղաքներուն մէջ,
նոյնպէս Եգիպտոս:



ՏՕՔԹ. ԱՆԹՕՆԻԱՏԻՍ

(Dr. Antoniadis)

Մասնագէտ ծածուկ եւ մորթային ախտերու
Բերն, Սերգիս փողոց, Թ. 20
(Անգլիական դեսպանատան մօտ)

Վկայեալ Վիէննայի Համալսարանէն ուր ու-
սած է տասնմէկ տարի, միեւնոյն տան
իբր օգնական—բժիշկ ծառայած ըլլալով
Բրօֆ. Նուամանի, Բարօսիի եւ Տիֆֆէլի
գալտնի հիւանդութեանց յատուկ քլինիք-
ներու մէջ:

Մինակ ծածուկ հիւանդութիւններէ եւ
մորթային ախտերէ առաւարդները կ'ընդունի
զորս կը բժշկէ նորագոյն եւ կատարելա-
գործեալ մէթոտներու համաձայն: Իր մաս-
նագիտութենէն դուրս՝ օրեւէ հիւանդ չըն-
դունիր:

ՏՕՔԹ. ԲՕՐԹՈՒԳԱԼԻՍ

(Dr. Portucalis)

Նախկին ուսուցիչ Կ. Պոլսոյ Կայս. Բժշ-
կական վարժարանին, անդամ Բարիքի բժշ-
կական համաժողովին:—Մասնա գէտ՝ արանց
եւ կանանց ծննդական գործարաններու հի-
ւանդութեանց:—Պատուոյ վկայագիր ունի
Պէրլինի, Լոնտոնի, Բեյթարի եւ ուրիշ եր-
կիրներու Ակադեմիներէն:—Հնարիչ բժշկա-
կան գործիքներու եւ հեղինակ իր մասնա-
գիտութեան վերաբերեալ գործերու:

Հիւանդ կ'ընդունի՝ Պոլսոյ կողմը, կա-
մուրջին դէմի անկիւնը, իր դարմանատան
մէջ, ամէն օր կէսօրէն մինչեւ իրիկուն: Իսկ
Բերն, Թաքսիմ, Քրոնսական հիւանդանոցին
դէմ, ամէն օր առաւօտէն մինչեւ կէս օր եւ
իրիկուն ժամ 6 էն 9 (Ը. Ե.)